
**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՎԵՃԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԳ**

*Կարծիքների
ժողովածու-3*



Երևան 2016

Կազմեցին՝
Լիանա Դոյրոյան,
 Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան
 «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի
 փոխսնօրեն, Տեղեկատվական վեճերի խորհրդի
 անդամ



U.S. Embassy in Armenia



Տվե՛ս կարծիքների ժողովածուն մշակվել և հրատարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ԶԼՄ վեճերի արտադատական լուծումներ տալու գործում տեղեկատվական վեճերի խորհրդի հզորացում» ծրագրի շրջանակներում Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ: Այստեղ արտահայտված կարծիքներն ու հետևությունները հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	5
Կարծիք 36. Արմեն Դարբինյանի կողմից «Քաղաքական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ-ի դեմ բերված դիմումի հիման վրա հարուցված դատական գործի կապակցությամբ.....	6
Կարծիք 37. Ենոք Աբրահամյանն ընդդեմ Աշոտ Մելոյանի գործի վերաբերյալ.....	11
Կարծիք 38. Քաղաքացիական հասարակության 16 ներկայացուցիչ ընդդեմ «Իրավունքի Մեդիա» ՍՊԸ-ի և Հովհաննես Գալաշյանի գործի վերաբերյալ.....	15
Կարծիք 39. Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործի վերաբերյալ.....	18
Կարծիք 40. «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանյանի և լրագրող Իլոնա Ազարյանի.....	22
Կարծիք 41. Աղբյուրի բացահայտման պարտավորեցման վերաբերյալ դատարանի որոշման մասին.....	26
Կարծիք 42. Ռուզաննա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի գործի վերաբերյալ.....	31
Կարծիք 43. Ոստիկանությունն ու դրա աշխատակիցներն ընդդեմ Վիլեն Գալֆեջյանի գործի վերաբերյալ.....	35
Կարծիք 44. «Հրապարակային արտահայտություն» հասկացությանը՝ դատարանի տված մեկնաբանության վերաբերյալ.....	39
Կարծիք 45. Դատաքննության հրապարակայնության վերաբերյալ.....	43
Կարծիք 46. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռի կապակցությամբ.....	46

Կարծիք 47. Վահրամ Պետրոսյանն ընդդեմ www.blognews.am անցանց լրատվական կայքի գործի վերաբերյալ.....	50
Կարծիք 48. Լրագրողին որպես վկա ոստիկանություն հրավիրելու պրակտիկայի վերաբերյալ.....	53
Կարծիք 49. «Թռչող առագաստ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մելտեքս» ՍՊԸ-ի դատական գործի կապակցությամբ.....	56
Կարծիք 50. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Magyar Tartalomszolgnlatgk Egyesblete and Index.hu Zrt-ն ընդդեմ Հունգարիայի գործով վճռի կապակցությամբ.....	59
Կարծիք 51. Ռուզաննա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի դատական վճռի կապակցությամբ.....	64
Կարծիք 52. Բավական Խաչատրյանն ընդդեմ Սարգիս Հացպանյանի, Առավոտ օրաթերթ ՍՊԸ-ի, Նյուս ԱՄ լրատվական-վերլուծական գործակալության և «Նոյան Տապան» լրատվական կենտրոնի դատական գործի կապակցությամբ.....	66

Առաջաբան

2010 թվականի մայիսին ստեղծվեց Տեղեկատվական վեճերի խորհուրդը որպես արտադատական մարմին՝ նպատակ ունենալով հավասարակշռություն սահմանել մի կողմից՝ խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքների և մյուս կողմից՝ մարդու արժանապատվության և անձնական կյանքի գաղտնիության միջև: Տեղեկատվական վեճերի խորհրդի (այսուհետ՝ ՏՎԽ) հիմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի իրավունքը՝ այդ իրավունքների իրացման ընթացքում ծագող դատական վեճերի դեպքերում եզրակացություններ կամ հայտարարություններ հրապարակելով, որոնք հիմնված են ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և էթիկայի նորմերի վրա:

Հիմնադրումից մինչ 2016 թվականի օգոստոսը Խորհուրդը հրապարակել է 52 կարծիք մամուլի դեմ բերված դատական գործերի վերաբերյալ: Այս ժողովածուն ամփոփում է 2013 թ.-ի օգոստոսից մինչև 2016 թվականի մարտ հրապարակված կարծիքները: Նախորդ կարծիքները հրապարակվել են ժողովածուի I և II հավաքածուներում:

Կարծում ենք՝ ժողովածուն օգտակար նյութ կլինի դատավորների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, փաստաբանների և ոլորտով հետաքրքրվող ու շահագրգիռ այլ խմբերի համար:

Ժողովածուն կազմել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ:

Կ Ա Ր Ծ Ի Ը 36

Արմեն Դարբինյանի կողմից «Քաղաքական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ-ի դեմ բերված դիմումի հիման վրա հարուցված դատական գործի կապակցությամբ

Հրապարակված է 2013թ.-ի օգոստոսի 21-ին

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2012թ.-ի օգոստոսի 18-ին «Քաղաքական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ-ին պատկանող www.n-idea.am կայքում հրապարակվել է ՀՀ նախկին վարչապետ, Սլավոնական համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանի վերաբերյալ հոդված հետևյալ վերնագրով. «Արմենչիկ Դարբինյանը վճարել չի սիրում, ինչու՞ պիտի սիրի որ, եթե պաշտպանվում է հայկական պետության կողմից»: Արմեն Դարբինյանը դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, նշելով, որ հոդվածի մի շարք արտահայտություններ վիրավորական ու զրպարտող են և պահանջել է պարտավորեցնել պատասխանողին հրապարակավ ներողություն խնդրել և վճարել փոխհատուցում 1 մլն դրամի չափով վիրավորանքի դեմ, 2 մլն դրամ զրպարտության դեմ, 1 մլն դրամ փաստաբանի վարձատրության և 84 հազար դրամ վճարված պետական տուրքի դեմ:

Հայցվորը վիրավորական է համարել հետևյալ արտահայտությունները.

«...Եվ ահա այսօր Արմենչիկ Դարբինյանը՝ նորահայ իրականության այդ նապոլեոնակերպ ֆենոմենը, վրդովվել է Սյուզան Սիմոնյանի հոդվածից: Facebook-ի իր էջում այդ ցրանը գրել է ...»:

«...Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է այդ ոչնչությունը, այս խղճուկ ցրանը, որը խլում է մեր երեխաների հացը (ի դեպ, սպառնալիքի տակ են Հայաստանի բոլոր (ոչ էլիտար) երեխաները, ցրան Դարբինյանին առայսօր հաջողվել է խլել իմ երեխայի, Սերոբյանի ու էլի շատերի երեխաների հացը, բայց դա չի նշանակում, թե նա դրանով կկշտանա...»:

«... Թեկուզև այն բանի համար, որ Վազգենը կանոնավորապես (գրեթե ամեն օր) դաստիարակչական գործողություններ էր կազմակերպում արմենչիկակերպ ուռողների հանդեպ...»:

Հայցվորը զրպարտող է համարել հետևյալ հայտարարությունները.

«պետությունը նրան թույլ է տվել ապրել իրավական դաշտից դուրս, այլ բարիքներ էլ է նվիրել, որոնք նա կարողացել է «ցրել»,

...պետությունն Արմենչիկ Դարբինյանին թույլ է տալիս անպատիժ մտնել Հայաստանի հասարակ քաղաքացիների գրպանը, նրանց նյութական վնաս հասցնել,

...այսպես, այս փառահեղ վարչապետն ամբողջ կյանքում սնվել է գողացած մսով և մսամթերքով (այսինքն անվճար), քանի որ նրա պապան մսի կոմբինատն էր թալանում տնօրենի կարգավիճակում, իսկ մինչ այդ Արմենչիկ Դարբինյանը մինչ այդ սնվում էր թեմանցքով,

...ցռան Դարբինյանին առ այսօր հաջողվել է խլել իմ երեխայի, Սերոբյանի ու էլի շատերի երեխաների հացը,

....Վազգենն Արմենչիկ Դարբինյանին (վարչապետ եղած ժամանակ) իր մոտ է կանչել այդ ժամանակվա ֆինանսների նախարար Սանդոյանի հետ, հայիոյել ամենահետին խոսքերով և ծեծելով համարյա թե մահվան դուռը հասցրել»:

Դատական քննության ընթացքում պատասխանողը վերը նշված արտահայտությունները ներկայացրել է որպես գնահատական-դատողություններ, որոնք ենթակա չեն ապացուցման և այդ առումով եզրահանգել, որ իր մոտ բացակայել է վիրավորելու դիտավորությունը և որ իր վրա չպետք է դրվի այդ արտահայտությունները ապացուցելու պարտականություն:

Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակիորեն. դատարանը որոշել է, որ վերը նշված արտահայտությունները վիրավորական ու զրպարտող են, սակայն զգալիորեն նվազեցրել է փոխհատուցման չափը և սահմանել 200,000 դրամ վիրավորանքի, 200,000 դրամ զրպարտության, 150,000 դրամ փաստաբանի և 8,000 դրամ պետական տուրքի դիմաց: Դատարանը պատասխանողին պարտավորեցրել է նաև հրապարակավ ներողություն խնդրել:

Վերաքննիչ դատարանը հատկապես անդրադարձել է վերը նշված արտահայտությունները գնահատական-դատողություն լինելու մասին պատասխանողի փաստարկներին և կատարել հետևյալ եզրահանգումները.

«... վիճարկվող տեղեկատվության դատողություն հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, անհրաժեշտ է պարզել ,դատողությունե բառի բուն իմաստը:

Տրամաբանությունում դատողությունը մտածողության այն ձևն է, որն իրենից ներկայացնում է հասկացությունների համակցություն, որոնցից մեկը (սուբյեկտ) որոշվում և բացվում է մյուսի միջոցով (պրեդիկատ):

Բանասիրությունում դատողություն է հանդիսանում կարծիքներ, խորհուրդներ, համոզմունքներ ունկնդրելու հիման վրա կատարված եզրահանգումը, ենթադրությունը, մեկնաբանությունը, պարզաբանումը:

Այս պարագայում տրամաբանության տեսանկյունից բացակայում է պրեդիկատը, առկա է միայն սուբյեկտը (...«պետությունն Արմենչիկ Դարբինյանին թույլ է տալիս անպատիժ մտնել Հայաստանի հասարակ քաղաքացիների գրպանը, նրանց նյութական վնաս հասցնել», ,...այս փառահեղ վարչապետն ամբողջ կյանքում սնվել է գողացած մսով և մսամթերքով (այսինքն անվճար), քանի որ նրա պապան մսի կոմբինատն էր թալանում տնօրենի կարգավիճակում, իսկ մինչ այդ Արմենչիկ Դարբինյանը մինչ այդ սնվում էր թել-

մանցքով» և այլն), բանասիրական տեսանկյունից բացակայում են թե խորհուրդները, համոզմունքները, և թե դրանց հիման վրա կատարված ենթադրությունները, մեկնաբանությունները, պարզաբանումները, եզրահանգումները: Առկա է միայն միանշանակ փաստացի տվյալների վերաբերյալ պնդում, հայտարարություն, ներկայացում:

Նման պայմաններում վերաքննիչ բողոք բերող անձի վերը շարադրված փաստարկը հիմնավոր չէ»:

Այսպիսով, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները վիճահարույց բոլոր արտահայտությունները դիտել են որպես փաստի մասին հայտարարություններ:

2. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Խորհուրդը ողջունում է դատարանի կողմից «դատողություն» եզրույթի մեկնաբանման կապակցությամբ, քանի որ գտնում է, որ դատական պրակտիկայում ձևավորվել է մի մոտեցում, որի շրջանակներում դատավարության կողմերը հաճախ փորձում են փաստի մասին սովորական հայտարարությունը ներկայացնել որպես գնահատական-դատողություն¹: Ավելին, երբեմն նույնիսկ դատարաններն են փաստի մասին հայտարարությունը, այդ թվում նաև արտահայտված կարծիքը, ներկայացնում որպես գնահատական-դատողություն²:

Այս առումով **Խորհուրդը գտնում է**, որ վաղուց ծագել էր «գնահատական-դատողություն» եզրույթի դատական մեկնաբանության անհրաժեշտություն իրավակիրառ պրակտիկայում:

Այդուհանդերձ, **Խորհուրդը համամիտ չէ** դատարանի հետ, որ խնդրո առարկա բոլոր արտահայտությունները փաստի մասին հայտարարություններ էին, հետևաբար և չէին կարող գնահատական-դատողություններ լինել:

Նմանապես, **Խորհուրդը համաձայն չէ** նաև պատասխանողի դիրքորոշման հետ, որ նշված բոլոր արտահայտությունները գնահատական-դատողություններ էին:

Խորհուրդը կարծում է, որ դատարանի և հայցվորի կողմից վիրավորական գնահատված արտահայտությունների շարքում բազմաթիվ արտահայտություններ գնահատական-դատողություններ էին, այլ ոչ

1. Տե՛ս ՏԿԽ թիվ 12 կարծիքը Գլենդեյլ Հիլզն ընդդեմ ,Ժամանակե օրաթերթի դեմ:

2. Տե՛ս, օրինակ, ՏԴ1-0177/02 գործով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27/04/2012թ. և 22/03/2013 վճիռները «Իջևանի ՃՇՇ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Իջևան հ/ը և լրագրող Նաիրա Խաչիկյանի գործով, որոնցում դատարանը փաստի մասին սովորական հայտարարությունը կամ արտահայտված կարծիքները ներկայացնում է որպես գնահատական-դատողություն:

թե «փաստացի տվյալների վերաբերյալ պնդում»։ Օրինակ, «նապոլեոնական ֆենոմենը» արտահայտությունը չի կարող դիտվել որպես փաստի մասին հայտարարություն, քանի որ դա անձի սուբյեկտիվ տպավորության, այլ ոչ թե փաստի հիման վրա հնչեցված գնահատական է։ Նմանապես, վիճահարույց պարբերություններում բազմաթիվ արտահայտություններ իրենց բնույթով գնահատական-դատողություններ էին, այլ ոչ թե փաստի մասին հայտարարություններ, որոնք դատարանը չի գնահատել որպես այդպիսին։

Խորհուրդը կարծում է, որ խնդիրը մասամբ օրենսդրության թերությունն է։ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը չի տալիս «գնահատական-դատողություն» հասկացության ինքնուրույն սահմանումը։

«Վիրավորանք» հասկացությունը սահմանված է նշված հոդվածի 2-րդ մասով, որը նշում է միայն հրապարակային «արտահայտության» մասին, որը հավասարապես կարող է վերաբերվել թե՛ փաստի մասին հայտարարությանը, թե՛ գնահատական-դատողությանը՝ առանց առանձին տարանջատելու այս երկու իրարից տարբերվող հասկացությունները։ Թեև դատարաններն իրենց որոշումներում շարունակաբար և հետևողականորեն անդրադառնում են այս հասկացությանը, սակայն օրենսդրական կարգավորման բացակայության պատճառով երբեմն ստեղծվում են իրավիճակներ, երբ դատավարության կողմերը փաստի մասին հայտարարությունն ընկալում են որպես գնահատական-դատողություն, կամ, ինչպես տվյալ դեպքում, գնահատական-դատողությունն է ընկալվում որպես փաստի մասին հայտարարություն։ Արդյունքում, սույն գործով պատասխանողից պահանջվել է ապացուցել բոլոր վիճահարույց արտահայտությունների, այդ թվում նաև գնահատական-դատողությունների ճշմարտացիությունը, որոնք ենթակա չեն ապացուցման։

Խորհուրդը գտնում է, որ եթե խնդրո առարկա հայտարարությունն անձի սուբյեկտիվ, այլ ոչ թե փաստի հիման վրա հնչեցված գնահատականն է մեկ այլ անձի մասին, տվյալ հայտարարությունը պետք է քննվի վիրավորանք հասկացության ներքո՝ որպես գնահատական-դատողություն, այլ ոչ թե զրպարտության հասկացության ներքո՝ որպես փաստի մասին հայտարարություն։

Կ Ա Ր Ծ Ի Թ 37

Եևոք Աբրահամյանն ընդդեմ Աշոտ Մելոյանի գործի վերաբերյալ

Հրապարակված է 2014թ.-ի սեպտեմբերի 3-ին

ՀՀ քաղաքացի Աշոտ Մելոյանը (այսուհետ՝ դիմումատու) դիմել է Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ խնդրելով տրամադրել կարծիք իր կողմից կատարված հրապարակային մի հայտարարության վերաբերյալ, որի հասցեատերը ՀՀ քաղաքացի Ենոք Աբրահամյանն է: Վերջինս դիմել է դատարան ընդդեմ դիմումատուի՝ պնդելով, որ հայտարարության մեջ տեղ են գտել իր հասցեին վիրավորական և զրպարտող բնույթի մի շարք արտահայտություններ և հայցելով դատական պաշտպանություն: Դատական քննությունը ընթացքի մեջ է: Ստորև ներկայացվում է ՏՎԽ-ի կարծիքը վիճահարույց հայտարարության վերաբերյալ:

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2014 թ.-ի մարտի 31-ին դիմումատու դիմումատուն Ֆեյսբուքի իր էջում կատարել է հետևյալ գրառումը.

«ԱՀԱ ԱՅՆ «ԲԺՇԿԻ» ԴԵՄՔԸ ՈՒՄ ՍԽԱԼ ԴԻԱԳՆՈՋԻ ՊԱՏԱՌՈՂ և ՍԽԱԼ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄԱՅՐՍ ՄԱՀԱՑԱԿ: Ահա այն ստահակի դեմքը, ով դեռ շարունակում է աշխատել որպես «բժիշկ» ողնաշարաբան...Լավ հիշեք այս դեմքը...Նա աշխատում է Վլադիմիր Ավագյանի բժշկական կենտրոնում...Ով չի հավատում որ նրա վրա քրեական գործ է հարուցված եղել, թող գրի ինձ և ես ցույց կտամ 1200 էջից բաղկացած քրեական գործը, որը քննիչները չորս անգամ կարճել են... Ցույց կտամ 5 դատաբժշկական փորձագետների իրարամերժ եզրակացությունները...դատական ձայնագրությունները, թե Յուրի Աբրահամյանը ոնց չէր կարողանում ինձ հետ դատարանում բժշկություն թեմաներով հիմնավորել իր արած կամ չարած գործողությունները, ոնց էր լեզուն կապ ընկել...Ահա այն ֆաշիստը որը ոչ մի անգամ ներողություն չխնդրեց, ոչ մայրիկիցս ոչ ինձանից, և ոչ էլ մեր ընտանիքից...Իսկ այսօր նրան ցույց են տալիս հեռուստատեսությունով...Թե ինչպես է մի ստահակ գերմանացի բժշկի հետ այստեղ Հայաստանում իրար հետ վիրահատություններ են կատարում...Այդ գերմանացի բժշկին արդեն քրեական պատասխանատվության են ենթարկել Գերմանիայում, և զրկել լիցենզայից...Երկու մարդասպանները իրար լավ գտել են...»

Աշոտ Մելոյանը գտնում է, որ իր մայրը մահացել է Ենոք Աբրահամյանի ուղղակի գործողությունների արդյունքում, մասնավորապես, որ վերջինս որպես օրթոպեդ-ողնաշարաբան իր մոր հիվանդության սխալ ախտորոշում է կատարել ու սխալ բուժում նշանակել, որը հանգեցրել է նրա մահվանը: Դեռ 2007 դիմումատուն ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում ՀՀ գլխավոր դատախազություն, որի հիման վրա հարուցվել է քրեական գործ 2008-2012թ. ընթացքում, որը սակայն իր վերջո կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Փաստերի առավել մանրամասն շարադրանքը ներկայացված է դիմումատուի կից նամակում, որով վերջինս դիմել է ՏՎԽ-ին և որում մանրամասնորեն շարադրել է իր պնդումները այն մասին, թե ինչու է նա գտնում, որ հայտարարության հասցեատերը ուղղակի կապ ունի իր մոր մահվան հարցում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Անկասկած է, որ facebook սոցիալական ցանցում դիմումատուի՝ որպես օգտատիրոջ կողմից հրապարակված ստատուսը հրապարակային հայտարարություն է, քանի որ այն տարածվել է «հասանելի է բոլորին» եղանակով: Հետևաբար, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը կիրառելի է նշված հայտարարության նկատմամբ:

Որպեսզի հրապարակային հայտարարությունը համարվի վիրավորական կամ զրպարտող, անհրաժեշտ է, նախ և առաջ, որպեսզի նման հայտարարությունը լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող: Արատավորող են այն արտահայտությունները, որոնք «հանրության կողմից դատապարտելի կամ պարսավելի են», «հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, որոնք «բովանդակում են... անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության...» մասին տեղեկություններ:

Դեկավարվելով այս առաջնորդող սկզբունքներով, **Խորհուրդը գտնում է**, որ վիճահարույց տեքստում արատավորող են «*նրա վրա քրեական գործ է հարուցված եղել*», «*երկու մարդասպաններ իրավ լավ գտել են*», «*ով շարունակում է աշխատել որպես «բժիշկ»*», «*ստահակ*» և «*ֆաշիստը*» արտահայտությունները:

Հաջորդ քայլը պետք է լինի նշված արտահայտությունները երկու խմբի՝ վիրավորանքի և զրպարտության բաժանելը, քանի որ իրավական պաշտպանության հիմքերը և եղանակները այս երկու հասկացությունների դեպքում տարբեր են:

Խորհուրդը գտնում է, որ «*նրա վրա քրեական գործ է հարուցված եղել*» փաստացի արտահայտությունը կարող է զրպարտություն համարվել, եթե դիմումատուն չհիմնավորի այդ հայտարարության ճշմարտացիությունը: Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն անձը ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր կողմից հրապարակայնորեն կատարված արատավորող բնույթի հայտարարությունը հիմնված է ստույգ փաստերի վրա: Ստույգ փաստեր եզրույթը մեկնաբանվում է որպես փաստեր, որոնք հիմնավորված են ապացույցներով՝ տեղեկատվության հրապարակման պահին: Ստույգ փաստեր են նաև հանրահայտ փաստերը, որոնք ապացուցման անհրաժեշտություն չունեն: Այսպիսով, դիմումատուն պետք է ապացուցի, որ Ենոք Աբրահամյանի նկատմամբ հարուցված է եղել քրեական գործ և/կամ, որ դա հանրահայտ փաստ է: Հակառակ դեպքում նշված հայտարարությունը կհամարվի զրպարտություն:

«*Երկու մարդասպաններ իրար լավ են գտել*» արտահայտությունը **Խորհուրդը նույնպես դիտում է** որպես փաստացի հայտարարություն: Հետևաբար,

այս դեպքում նույնպես դիմումատուն պետք է «ստույգ փաստերի» կամ «ապացույցների» հիման վրա հիմնավորի իր հայտարարության ճշմարտացիությունը: Եթե դա նրան հաջողվի, նշված արտահայտությունը չի համարվի զրպարտություն: Նշված արտահայտությունը զրպարտություն չի համարվի նաև այն դեպքում, եթե առկա լինի Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 3-րդ մասով սահմանված պաշտպանական երեք հիմքերից առնվազն մեկը: Դատելով գործի հանգամանքներից, նման հիմքերից ոչ մեկը առկա չէ: Հետևաբար, քանի դեռ դիմումատուն չի ապացուցի իր կողմից հնչեցված հայտարարության ճշմարտացիությունը, նշված արտահայտությունը կհամարվի զրպարտող:

«Ով շարունակում է աշխատել որպես «բժիշկ»» արտահայտությունում չակերտների մեջ վերցրած «բժիշկ» արտահայտությունը **Խորհուրդը դիտում է** որպես գնահատողական դատողություն: Որպես այդպիսին, այս արտահայտությունը պետք է դիտել վիրավորանքի, այլ ոչ թե զրպարտության հասկացության ներքո: «Վիրավորանք» հասկացության սահմանումը չի ենթադրում, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք պաշտպանված չէ օրենքով:

Գնահատողական դատողությունները, նույնիսկ եթե դրանք բացասական իմաստ ունեն, կարող են որոշակի կոնտեքստում և որոշակի փաստական հանգամանքների առկայության դեպքում անցնել ազատ խոսքի պաշտպանության տակ: Բացարձակապես որևէ փաստական հիմքերից զուրկ գնահատողական դատողությունը ազատ խոսքի պաշտպանության տակ չի անցնում:

Հաշվի առնելով նշվածը, **Խորհուրդը գտնում է**, որ նշված արտահայտությունը ընդհանուր առմամբ թույլատրելի շրջանակներում հնչեցրած սուր քննադատական խոսք է, որը բացարձակապես զուրկ չէ որոշ փաստական հիմքերից: Հետևաբար, այդ արտահայտությունը տվյալ համատեքստում վիրավորանք չէ:

«Ստահակ» և «Ֆաշիստ» արտահայտությունները նույնպես գնահատողական դատողություններ են: Ինչպես նշվեց վերևում, նույնիսկ խիստ բացասական, ցնցող և վիրավորական արտահայտությունները կարող են անցնել ազատ խոսքի պաշտպանության տակ, եթե դրանք հնչեցվել են որոշակի համատեքստում և եթե դրանք զուրկ չեն որոշ փաստական հիմքերից: Տվյալ դեպքում դիմումատուն իր հրապարակային հայտարարություններում ներկայացնում է մի շարք փաստական հիմքեր, որոնք հիմք են տվել նրան հնչեցնել վերը նշված քննադատական խոսքերը Ենոք Աբրահամյանի հասցեին: Այդուհանդերձ, համեմատելով նշված խոսքերի ծայրահեղ բացասական իմաստը (հատկապես «ֆաշիստ արտահայտությունը, որը ասոցացվում է ատելության խոսքի հետ») այն փաստական հիմքերի հետ, որոնք դիմումատուին ստիպել են հրապարակայնորեն հնչեցնել այդ խոսքերը, **Խորհուրդը գտնում է**, որ քննադատության նման եղանակը չի կարող համարվել իրավաչափ: Հետևաբար, դրանք վիրավորական արտահայտություններ են:

Կ Ա Ր Ծ Ի Ը 38

**Քաղաքացիական հասարակության
16 ներկայացուցիչ ընդդեմ «Իրա-
վունքի Մեդիա» ՍՊԸ-ի և Հովհաննես
Գալաջյանի գործի վերաբերյալ**

Հրապարակված է 2014թ.-ի դեկտեմբերի 9-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2014թ.-ի մայիսի 17-ին www.iravunk.com անցանց լրատվական կայքում հրապարակվել է «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. Ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդված, որը հեղինակել է լրագող Հովհաննես Գալաջյանը: Մի խումբ քաղաքացիներ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով դիմել են դատարան ընդդեմ լրատվամիջոցի և լրագրողի, գտնելով, որ հոդվածում տեղ են գտել իրենց պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող մի շարք արտահայտություններ, որոնք ոչ միայն վիրավորական ու զրպարտող բնույթի էին, այլ նաև ատելության խոսքի դրսևորումներ էին: Խնդրել են դատարանից պատասխանողներին պարտավորեցնել հրապարակայնորեն ներողություն խնդրել (տեքստի հրապարակումով) և որպես փոխհատուցում բռնագանձել հինգ միլիոն ՀՀ դրամ:

30/10/2014թ.-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է վճիռ, որով ամբողջությամբ մերժել է հայցը:

Իր որոշումը դատարանը հիմնավորել է այն եզրահանգմամբ, որ թեև հոդվածում օգտագործվել են որոշ չափազանցություններ, որոնք կարող էին ցնցել ու անհանգստություն պատճառել հայցվորներին, սակայն ընդհանուր առմամբ հոդվածագրի կողմից ցուցաբերվել է հավասարակշռված մոտեցում: Սրա հիման վրա դատարանը գտել է, որ հոդվածը ամբողջությամբ համապատասխանում է խոսքի մատուցման լրագրողական ազատության թույլատրելի շրջանակներին և որ հոդվածը «իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով»:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Խորհուրդը գտնում է, որ հոդվածում հնչեցվել են արտահայտություններ ու կոչեր, որոնք ծայրահեղականության, ատելության խոսքի դրսևորումներ են: Մինչդեռ դատարանն այդ հանգամանքը քննության առարկա չի դարձրել, թեև հայցվորներն այդ հարցը հստակորեն բարձրացրել էին իրենց հայցում:

Անկասկած է, որ նշված հոդվածով հոդվածագիրն իրականացնում էր ազատ արտահայտվելու իր իրավունքը: Այդուհանդերձ, ազատ խոսքի պաշտպանության ոչ մի կառուցակարգ չի տարածվում ատելության խոսքի վրա: Անհրաժեշտ է տարբերակել ցնցող, անհանգստություն պատճառող և նույնիսկ սադրող բնույթի քննադատական խոսքը այնպիսի խոսքից, որը ծայրահեղականության դրսևորում է և որպես այդպիսին սերմանում ու քարոզում է ատելություն: Առաջինը պաշտպանված է ազատխոսքով, իսկ երկրորդը? ոչ: Քաղաքակիրթ ազգերի կողմից ատելության խոսքը բացառվում է իսպառ? առանց որևէ բացառության: Այս մոտեցումն է ամրագրված նաև միջազգային իրավունքում, որը ատելության խոսքն աստիճանաբար ճանաչում է որպես միջազգային իրավունքի սովորույթային նորմ:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, ապա վերջինս ատելության խոսքն արգելում է երկու նյութաիրավական հիմքերով՝ Կոնվենցիայի 17-րդ հոդվածի հիմքով (իրավունքների չարաշահման արգելում), ըստ որի ատելության խոսքը ժխտում է Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքները, և Կոնվենցիայի 10 կամ 11-րդ հոդվածների երկրորդ մասերի հիմքով (պետական անվտանգություն, հասարակական անվտանգություն, այլոց իրավունքներ և այլն):

Այնպիսի արտահայտություն, ինչպիսին է «գրո հանդուրժողականությունը», ինչպես նաև հոդվածի ողջ համատեքստը, որով կոչ է արվում լիակատար անհանդուրժողականություն դրսևորել կոնկրետ անձանց նկատմամբ, ընդհուպ նրանց լիակատար սեգրեգացիան հասարակությունից, անհամատեղելի է ժողովրդավարական արժեքների, «իրավունքի գերակայության» և «քաղաքացիական համերաշխության» գաղափարների հետ, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում:

Հատկապես խնդրահարույց է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում լրատվամիջոցը ոչ թե տրամադրել է հարթակ ատելության խոսքի տարածման համար, այլ հենց ինքն է նման խոսքի հեղինակ: Առավել խնդրահարույց է, որ լրագրողը միևնույն ժամանակ տվյալ լրատվամիջոցի խմբագրական քաղաքականությունը մշակող անձ է, որի ուժով վերջինս ոչ միայն ստանձնում է առավել լայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ Սահմանադրությանը, օրենքներին և լրագրողական վարքագծի նորմերին իր գործունեությունը համապատասխանեցնելու հարցում:

Կ Ա Ր Ծ Ի Ը 39

Ինֆորմացիայի ազատության
կենտրոն ՀԿ-ն ընդդեմ
«Բնապահպանական ծրագրերի
իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկի գործի
վերաբերյալ

Հրապարակված է 2015թ.-ի հունվարի 20-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) 29.05.2012թ.-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» (*այսուհետ՝ Գրասենյակ*) պետական հիմնարկի տնօրենին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ստացել են արդյոք պարզատրույմներ (պարզավճարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզատրվել (ըստ հաստիքների) և ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզատրույմների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը և նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Գրասենյակը հրաժարվել է տրամադրել տեղեկատվություն վերը նշված 2-րդ հարցի վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ դա աշխատողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվություն է: Մնացած բոլոր հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է:

ԻԱԿ-ը մերժումը վիճարկել է դատարանում՝ պնդելով, որ նշված տեղեկատվությունը խնդրել է ըստ հաստիքների, այլ ոչ թե անվանական, և որ նման պայմաններում տեղեկատվությունը չի բարձրացնում քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիության մասին հարց: Կազմակերպությունը խնդրել է դատարանին հաշվի առնել նաև տեղեկատվության հանրային նշանակությունը:

Մի շարք դատական վարույթներից հետո 2014թ.-ի հոկտեմբերի 2-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է հայցը: Ղատարանը գտել է, որ Գրասենյակը տարին առնվազն մեկ անգամ պարտավոր է հրապարակել հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց անունները, ազգանունները և այլ անձնական տվյալներ և նման պայմաններում հայցվորները կարող են հեշտությամբ համադրել այդ տեղեկատվությունը 2-րդ հարցվով պահանջված տեղեկատվության հետ և այդպիսով բացահայտել տեղեկատվության սուբյեկտի անձնական տվյալները, այսինքն՝ թե ովքեր են ստացել խնդրո առարկա պարզավճարները և դրանց չափը:

Ղատարանը գտել է, որ նման պայմաններում կխախտվի տվյալ քաղժառանգողների անձնական կյանքի իրավունքը՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի, ՄԻԵԿ 8-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131, 134, 199-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հիմքերով:

ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄ

Անձնական կյանքի իրավունքը ամրագրված է Սահմանադրության 23-րդ հոդվածով: Այդուհանդերձ, այս իրավունքը բացարձակ իրավունք չէ և ենթակա է սահմանափակումների, որոնց հիմքերը շարադրված են Սահմանադրության 43-րդ հոդվածում: Ըստ այդմ, անձնական կյանքի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով, եթե դա հետապնդում է նույն հոդվածով շարադրված իրավաչափ նպատակներից մեկը կամ մի քանիսը (հանցագործությունների կանխում, պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության, այլ անձանց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանություն), և եթե սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակարգում:

Առաջին պայմանը, օրինականություն սկզբունքը, բավարարված է՝ Գրասենյակը իր որոշումը հիմնավորել է մի շարք օրենսդրական նորմերով, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին: Ինչ վերաբերում է նպատակի իրավաչափությանը, ապա ակնհայտ է, որ տեղեկատվության տրամադրման սահմանափակումն ուղղված էր «այլ անձի իրավունքների» տվյալ դեպքում անձնական կյանքի պաշտպանությանը: Ուստի, այս առումով նույնպես սահմանափակումն իրավաչափ է:

Ինչ վերաբերում է երրորդ չափանիշին, ապա այս առումով հարց է բարձրանում, թե արդյոք հանրային գործառույթներ իրականացնելու համար հարկատուների գումարներից պարգևատրում ստացած քաղաքացիական ծառայողի հաստիքը, աշխատավարձի չափը և պարգևատրման չափը գաղտնի պահելը անհրաժեշտ միջոց է ժողովրդավարական հասարակարգում: Այն փաստը, որ տեղեկատվության սուբյեկտը ոչ թե մասնավոր ընկերության աշխատակից է, այլ հանրային ծառայություն իրականացնող անձ, ինչպես նաև, որ տեղեկատվության բնույթը ուներ հանրային նշանակություն, էական հանգամանքներ են: Ժողովրդավարության հիմնական պայմաններից մեկը՝ հասարակական վերահսկողությունը պետական մարմինների նկատմամբ, էապես կտուժի, եթե հանրային նշանակության տեղեկատվության նկատմամբ կիրառվեն մասնավոր իրավահարաբերություններ կարգավորող սկզբունքներ:

Այս իմաստով **Խորհուրդը չի կարող անտեսել**, որ առաջին ատյանի դատարանն ընդհանրապես չի անդրադարձել տեղեկատվության հանրային նշանակությանը և փորձ չի արել տեղեկատվություն ստանալու հանրային շահը համեմատել անձնական կյանքի պաշտպանության մասնավոր շահի հետ և դրա արդյունքում պարզել, թե արդյոք տեղեկատվության մերժումը համաչափ էր իրավաչափ նպատակի հետ, թե՛ ոչ:

Ցանկացած սահմանափակում պետք է ռացիոնալ կապի մեջ գտնվի անհրաժեշտության հետ, որը ներկայացվում է որպես սահմանափակման հիմք: Այս իմաստով վերացական և ընդհանրական բնույթի պատճառաբանությունները չեն համապատասխանում «համաչափության» և «անհրաժեշտության» հիմնարար սկզբունքներին, որոնք կարմիր թելի պես անցնում են

վարչաիրավական հարաբերություններում: Հետևաբար, այն հանգամանքը, որ կբացահայտվի քաղաքացիական ծառայողի անունը և ազգանունը, ինքնին բավարար պատճառ չէ, որպեսզի մերժվի քաղաքացիական ծառայողի հաստիքի, պարզևավճարի ու աշխատավարձի չափի մասի հանրային նշանակության տեղեկության տրամադրումը:

Անհրաժեշտ է նաև ցույց տալ, թե արդյոք առկա էր որևէ առանձնահատուկ հանգամանք, որի պայմաններում անձնական տվյալների մասին տեղեկատվության գաղտնիությունը գերակայում էր տվյալ տեղեկությունը ստանալու հանրային շահին: Այդպիսին կարող են լինել, օրինակ, տեղեկությունները, որոնց տրամադրման դեպքում կբացահայտվի անձի ռասայական ծագումը, քաղաքական կամ կրոնական կամ այլ համոզմունքները, առողջական վիճակը, սեռական կյանքին առնչվող անձնական տվյալները¹, որոնց առումով որոշակի կոնկրետ հանգամանքների առկայության պայմաններում կարող է պահանջվել առավել մեծ խորհրդապահություն, քան սովորական պայմաններում դա անհրաժեշտ է: Որևէ նման հանգամանք առկա չէ սույն գործում, որը ևս հիմք է տալիս պնդելու, որ տեղեկատվության մերժումը համաչափ ու բավարար միջոց չի եղել:

Հետևաբար, նույնիսկ եթե հաստիքի մասին տեղեկատվությունը հանգեցնել կամ ընդունակ լինել հանգեցնելու տվյալ հաստիքը զբաղեցնող անձի ինքնության նույնականացմանը, որևէ փաստական տվյալով չի հիմնավորվում, որ քաղաքացիական ծառայողի պաշտոնը զբաղեցնող տվյալ անձը կհայտնվեր էապես անբարենպաստ իրավիճակում և որ նրա անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի միջամտությունը այն աստիճան խորը կլիներ, որ տեղեկատվություն ստանալու հանրային շահի գերակայումը արդարացված չէր լինի: Ի վերջո, հասարակությունը իրավունք ունի տեղեկանալու, թե ինչ պաշտոն է զբաղեցնում և ով է այն հանրային ծառայողը, ով հարկատուների հաշվին ստանում է դրամական խոշոր պարզևատրում հանրային բնապահպանական խնդիրներով զբաղվելու համար:

Վերը նշվածի հիման վրա **Խորհուրդը գտնում է, որ Գրասենյակը խախտել է կազմակերպության տեղեկատվության մատչելիության իրավունքը Սահմանադրության 27-րդ հոդվածի հիմքով՝ անհրավաչափորեն մերժելով տեղեկատվության տրամադրման մասին կազմակերպության պահանջը:**

1. Տե՛ս Անձնական կյանքի ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին Կոնվենցիան, հոդված 6:

Կ Ա Ր Ծ Ի Զ 40

**«Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն
ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի
խմբագրական խորհրդի նախագահ
Հայկ Բաբուխանյանի և լրագրող
Իլոնա Ազարյանի**

Հրապարակված է 2015թ.-ի մայիսի 7-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2014թ.-ի «Իրավունք» թերթի թիվ 62 (2410) համարում (հունիսի 6-9) ,Ապագա-
գայինե խորագրի ներքո հրապարակվել է «*Երբ համասեռամուլների գրան-
տածիծ պաշտպանները պետական աջակցություն են ստանում*» վերնագ-
րով հոդված, որում լրագրողը ներկայացրել է իր հարցազրույցի բովանդա-
կությունը ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության հարցերի
երիտասարդական քաղաքականության վարչության պետի հետ: Հարցազ-
րույցի տեքստից առաջ լրագրողը զետեղել է նախաբան հետևյալ բովանդա-
կությամբ.

*«Պարզվում է, որ ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունը
շնորհակալագրերով տարվա լավագույն կազմակերպություններ է ճանա-
չում նաև այն կազմակերպություններին, ովքեր կոչ են անում ,հարգել
մարդու իրավունքները և ,վերջ տալ հոմոֆոբիային, այսինքն՝ պաշտ-
պանում են համասեռամուլներին: Նման հայտարարությամբ մայիսի 17-ին
հանդես էր եկել «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ն, որին անցած
տարվա վերջում Սպորտի և երիտասարդության նախարարությունը Շի-
րակի մարզում ճանաչել է տարվա լավագույն կազմակերպություն: Թե որ
արժանիքների համար է հակաբարոյական մարդկային թափոնին պաշտ-
պանող և անցյալ տարի Գյումրիում Անկախության տոնը՝ սեպտեմբերի
21-ը պացիֆիստական-տոլեռաստական ակցիայով պղծած տվյալ կազ-
մակերպությունը ճանաչվել տարվա լավագույն, փորձեցինք պարզել ՀՀ
սպորտի և երիտասարդության նախարարության հարցերի երիտասար-
դական քաղաքականության վարչության պետ...»:*

Հոդվածը ուղեկցվել է լուսանկարով, որը տեղադրված է եղել հոդվածի
կենտրոնական հատվածում, որտեղ մի խումբ երիտասարդների ձեռքին
ԱՄՆ-ի դրոշմ է և «No Hate Speech» մակագրությամբ պաստառ: Նկարի
ներքևի հատվածում ներառվել է հետևյալ գրությունը.

*«21 սեպտեմբեր 2013. «Նոր սերունդ» ՀԿ-ն Գյումրիում փաստացի պղ-
ծում է Անկախության տոնը՝ անցկացնելով պացիֆիստական միջոցա-
ռում: Ցուցարարների ձեռքում ամենից շատ կարելի է տեսնել «No hate
speech» մակագրությամբ պաստառները: Այդ կարգախոսը համասեռա-
մուլների շահերի լոբբիստների թիվ 1 կարգախոսն է»:*

2014թ. հուլիս ամսին «Նոր սերունդ» հասարակական կազմակերպությունը
դիմել է Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ ընդհանուր իրավասության դա-
տարան ընդդեմ Իրավունք մեդիա ՍՊԸ-ի խմբագրական խորհրդի նախա-
գահ Հայկ Բաբուխանյանի և լրագրող Իլոնա Ազարյանի: Կազմակերպությու-
նը գտնում է, որ հոդվածով արատավորվել է կազմակերպության գործա-
րար համբավը՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով, և
խնդրել է դատարանից պարտավորեցնել լրատվամիջոցին «Իրավունք»
թերթում «Հերքում» խորագրի ներքո ներողություն խնդրել կազմակերպու-
թյունից, հօգուտ հայցվորի բռնագանձել 3.000.000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ
որպես արդարացի փոխհատուցում և հրապարակել դատական ակտը: Դա-
տաքննությունը ներկայումս ընթացքի մեջ է նշված դատարանում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Թեև լրագրողական ազատությունը ներառում է հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ սուր քննադատական, ցնցող, անհանգստություն պատճառող և նույնիսկ սադրող բնույթի խոսք տարածելու հնարավորություն, նման ազատությունը ազատ խոսքի խախտում չէ, եթե լրագրողը միաժամանակ գործում է բարեխղճորեն և տրամադրում է վստահելի ու ճշգրիտ տեղեկություն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա (Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 5433/02, 14/12/2006, ՄԻԵԴ, 40):

Տվյալ դեպքում լրագրողը կազմակերպությանը բնորոշել է «*հակաբարոյական մարդկային թափոնին պաշտպանող*» արտահայտությամբ: Փաստերը ցույց են տալիս, որ նման բնորոշումը տրվել է բացառապես այն պատճառով, որ կազմակերպությունը իր գործունեությամբ կոչ է անում հարգել մարդու իրավունքները, չտրվել հոմոֆոբիային և վերջ տալ ատելության խոսքին՝ մի բան, որն արվում է ողջ քաղաքակիրթ մարդկության կողմից: Նման պարագայում ցանկացած ողջամիտ ընթերցող կարող է հանգել հակառակ եզրահանգման. որ լրագրողը հերքում է մարդու իրավունքների պաշտպանությունը, մերժում է խտրականության, ատելության խոսքի և մարդատյացության համընդհանուր արգելքը:

Որևէ այլ եզրահանգման հնարավոր չէ հանգել նշված տեքստը կարդալիս: Լրատվության մատուցման նման եղանակը մտահոգիչ է, քանզի ստացվում է, որ լրագրողը, նույնիսկ եթե իրականում նման մտադրություն չունի, ակամայից դառնում է ատելության խոսք տարածող, քարոզում է անհանդուրժողականություն և ծայրահեղականություն:

Տեղեկատվություն տրամադրելու նման եղանակը անընդունելի է, անիրավաչափ և հեռու է լրագրողական բարեխղճությունից: Այդ ամենը պետք է գնահատել նաև այն լույսի ներքո, որ լրագրողը իրականացնում է հանրային գործառույթ (հանրությանը տրամադրելով զանգվածային լրատվություն) և նման պարագայում լրագրողական նման գործունեությունը ներկայացնում է նաև հանրային վտանգավորություն:

Փաստերից նաև բխում է, որ լրագրողը մարդու իրավունքների պաշտպանությունը և ատելության խոսքի արգելքը *a priori* նույնականացրել է նույնասեռականության պաշտպանության հետ՝ առանց նման մտահանգման համար հողվածում որևէ փաստական հիմքեր առաջարկելու և ողջամիտ եզրահանգումներ ներկայացնելու: Անհասկանալի է նաև, թե ինչից ելնելով է լրագրողը եզրահանգել, որ այնպիսի համամարդկային արժեք, ինչպիսին է ոչ ատելության խոսքինե կարգախոսը նույնասեռականների իրավունքների պաշտպանության «*թիվ 1 կարգախոսն է*», որ այդ կարգախոսը քարոզում է պացիֆիզմ, որն էլ իր հերթին պղծում է ՀՀ անկախության տոնը:

Նման մտահանգման համար չի ներկայացվել որևէ բացատրություն, մեկնաբանություն, փաստական հիմք կամ աղբյուր (գիտական, իրավական, հասարակական, և այլն), որոնք հակառակ դեպքում կվկայեին, որ լրագրողը նախորոք ուսումնասիրել է խնդրո առարկա երևույթը, հիմնվել է օբյեկտիվ

տվյալների վրա, դրանց հիմա վրա կազմել լրատվական նյութ ու տարածել հանրությանը: Լրատվության մատուցման նման եղանակը ոչ ավելին է, քան անպատասխանատու լրագրության օրինակ:

Խորհուրդը գտնում է, որ հողվածում հնչեցվել են արտահայտություններ ու կոչեր, որոնք ծայրահեղականության, ատելության խոսքի դրսևորումներ են: Մինչդեռ դատարանը այդ հանգամանքը քննության առարկա չի դարձրել, թեև հայցվորները այդ հարցը հստակորեն բարձրացրել էին իրենց հայցում:

Անկասկած է, որ նշված հողվածով հողվածագիրը իրականացնում էր ազատ արտահայտվելու իր իրավունքը: Այդուհանդերձ, ազատ խոսքի պաշտպանության ոչ մի կառուցակարգ չի տարածվում ատելության խոսքի վրա: Անհրաժեշտ է տարբերակել ցնցող, անհանգստություն պատճառող և նույնիսկ սադրող բնույթի քննադատական խոսքը այնպիսի խոսքից, որը ծայրահեղականության դրսևորում է և որպես այդպիսին սերմանում ու քարոզում է ատելություն: Առաջինը պաշտպանված է ազատ խոսքով, իսկ երկրորդը՝ ոչ: Քաղաքակիրթ ազգերի կողմից ատելության խոսքը բացառվում է իսպառ՝ առանց որևէ բացառության: Այս մոտեցումն է ամրագրված նաև միջազգային իրավունքում, որը ատելության խոսքը աստիճանաբար ճանաչում է որպես միջազգային իրավունքի սովորույթային նորմ:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, ապա վերջինս ատելության խոսքը արգելում է երկու նյութաիրավական հիմքերով՝ Կոնվենցիայի 17-րդ հողվածի հիմքով (իրավունքների չարաշահման արգելում), ըստ որի ատելության խոսքը ժխտում է Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքները, և Կոնվենցիայի 10 կամ 11-րդ հողվածների երկրորդ մասերի հիմքով (պետական անվտանգություն, հասարակական անվտանգություն, այլոց իրավունքներ, և այլն):

Այնպիսի արտահայտություն, ինչպիսին է «զրո հանդուրժողականությունը», ինչպես նաև հողվածի ողջ համատեքստը, որով կոչ է արվում լիակատար անհանդուրժողականություն դրսևորել կոնկրետ անձանց նկատմամբ, ընդհուպ նրանց լիակատար սեգրեգացիան հասարակությունից, անհամատեղելի է ժողովրդավարական արժեքների, «իրավունքի գերակայության» և «քաղաքացիական համերաշխության» գաղափարների հետ, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում:

Հատկապես խնդրահարույց է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում լրատվամիջոցը ոչ թե տրամադրել է հարթակ ատելության խոսքի տարածման համար, այլ հենց ինքն է հանդիսացել նման խոսքի հեղինակ: Առավել խնդրահարույց է, որ լրագրողը միևնույն ժամանակ հանդիսանում է տվյալ լրատվամիջոցի խմբագրական քաղաքականությունը մշակող անձ, որի ուժով վերջինս ոչ միայն ստանձնում է առավել լայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ Սահմանադրությանը, օրենքներին և լրագրողական վարքագծի նորմերին իր գործունեությունը համատեղելու հարցում:

Կ Ա Ր Ծ Ի Զ 41

**Աղբյուրի բացահայտման
պարտավորեցման վերաբերյալ
դատարանի որոշման մասին**

Հրապարակված է 2015թ.-ի մայիսի 30-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

«Հրապարակ» օրաթերթի 09.05.2014թ.-ի համարում հրապարակվել է լրագրող Սյուզան Սիմոնյանի հեղինակած «Ծուխ առանց կրակի, կամ ոստիկանապետի գլխին ամպեր են կուտակվում» վերնագրով հոդված:

Մեկ այլ՝ «Այ լուր էյ էմ» (www.ilur.am) լրատվական կայքում հրապարակվել է «Շիրակի ոստիկանապետը հարձակվել է հայտնի ըմբիշի վրա: Մարզիկը մտածում է Հայաստանի դրոշի տակ հանդես չգալու մասին» վերնագրով հոդված: Երկու հոդվածներում էլ հոդվածագրերը, հիմնվելով չբացահայտված աղբյուրների վրա, տեղեկացրել են, որ տեղի է ունեցել միջադեպ Շիրակի ոստիկանապետի և հայտնի ըմբիշ Արթուր Ալեքսանյանի միջև, որի ընթացքում ոստիկանապետը բռնություն է կիրառել ըմբիշի նկատմամբ: Նույն միջադեպի վերաբերյալ այլ լրատվամիջոցներ ևս հրապարակել են հոդվածներ, ակնարկներ, լուրեր:

30.05.2014թ.-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը (*հետայսու՝ ՀԲԾ*) հարուցել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով): Քրեական գործի շրջանակներում քննիչը դիմել է դատական ատյանին, որպեսզի վերջինս կայացնի «Հրապարակ» օրաթերթին վերը նշված հոդվածի լրատվական աղբյուրը բացահայտելուն պարտավորեցնելու մասին որոշում:

26.06.2014թ.-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է միջնորդությունը և կայացրել լրատվական աղբյուրը բացահայտելուն պարտավորեցնելու մասին որոշում: Հրապարակ օրաթերթի ներկայացուցիչները ներկայացրել են վերաքննիչ բողոք դատարանի որոշման դեմ:

22.09.2014թ. Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է բողոքը: Օրաթերթի ներկայացուցիչները որոշումը բողոքարկել են Վճռաբեկ դատարան:

28.11.2014թ.-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը՝ փաստացի բողոքը ճանաչելով անընդունելի:

Որոշ ժամանակ անց ՀԲԾ քննիչը գրավոր դիմել է «Հրապարակ» օրաթերթին՝ պահանջելով բացահայտել աղբյուրի տվյալները: Օրաթերթի խմբագրությունը հայտնել է, որ աղբյուրի մասին տվյալներին չի տիրապետում՝ փաստացի չտրամադրելով պահանջված տեղեկատվությունը: Քննչական մարմինը որևէ այլ գործողություն չի ձեռնարկել վճռի կատարման ուղղությամբ: Առ այսօր նշված դատական որոշումը մնում է չկատարված:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Անձանց՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության իրավունքի բովանդակության մաս է կազմում տեղեկության տարածումը առանց նշելու տեղեկատվության աղբյուրը, ինչն իր հերթին պարտականություն է առաջ բերում լրագրողի և/կամ լրատվամիջոցի համար՝ գաղտնի պահել տեղեկատվության աղբյուրը:

Այս իրավահարաբերության բովանդակությունը Եվրոպական դատարանը բացահայտել է, ի թիվս այլոց՝ Գուդփինն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով¹, սահմանելով, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը ներառում է նաև լրագրողների իրավունքը՝ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու վերաբերյալ.

«Տեղեկատվության լրագրողական աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնարար պայմաններից է ... »²:

Տեղեկատվության աղբյուրի չբացահայտելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի քանի կարևոր հանգամանքներով.

1. լրագրողի գործունեության ընթացքում լինում են դեպքեր, երբ տեղեկություն տրամադրող անձը համաձայնում է խոսել միայն չբացահայտվելու պայմանով: Լրագրողն այս դեպքում իհարկե, պետք է պարզի աղբյուրի գաղտնի մնալու շարժառիթը, և միայն դրանից հետո խոստանա չբացահայտել:
2. լրագրողներն իրենց գործունեության ընթացքում շատ հաճախ օգտվում են տեղեկատվության այնպիսի աղբյուրներից, որոնք ցանկանում են գաղտնի մնալ՝ ահազանգելով իրենց հաստատություններում տեղի ունեցող ապօրինությունների մասին: Արտահոսած տեղեկությունն օգտագործելը, այսպիսով, կարևոր նշանակություն կարող է ունենալ լրագրողի աշխատանքի արդյունավետության համար, եթե լրագրողը երաշխավորի աղբյուրի գաղտնիությունը:

Ավելին, հաշվի առնելով, որ լրագրողները և լրատվամիջոցները, ելնելով նրանց գործունեության հանրային բնույթից, հեշտությամբ կարող են ներգրավվել ոստիկանության կամ դատական համակարգի գործունեության մեջ, աղբյուրի գաղտնիության պաշտպանությունը և նման պաշտպանության երաշխիքը նույնպես ձեռք են բերում մեծ կարևորություն: Ըստ Գուդփիննի գործում արտահայտված դիրքորոշման.

«Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդադարառնա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ստույգ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի հնարավորության վրա: Արդյունքում, կխաթարվի մամուլի՝ որպես հասարակական շահերի պաշտպանի կենսականորեն կարևոր դերը:

1. Թիվ 17488/90, 27/03/1990:

2. §39:

Նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում տեղեկատվության աղբյուրների պաշտպանության կարևորությունը մամուլի ազատության համար և այն վտանգավոր ներգործությունը, որով աղբյուրի բացահայտման մասին դատական կարգադրությունը կարող է ունենալ մամուլի ազատության վրա, նման միջոցը չի կարող համարվել համատեղելի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե դա արդարացված չէ ավելի կարևոր հասարակական շահի առկայության անհրաժեշտությամբ»:

«Հասարակական շահ» հասկացությունը մեկնաբանվել է ԵԽ Նախարարների կոմիտեի 08.03. 2004թ թիվ 2000(7) Լրագրողական աղբյուրների գաղտնիության պաշտպանության մասին հանձնարարականում, համաձայն որի տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել անհրաժեշտ, երբ համոզիչ կերպով հաստատված է, որ.

- տեղեկատվության աղբյուրի բացահայտում պահանջող անձանց կամ պետական մարմինների մոտ սպառվել են այլընտրանքային միջոցները,
- աղբյուրի բացահայտման **իրավաչափ նպատակը գերակայում է** հանրային շահին, նկատի առնելով նաև, որ
 - աղբյուրի բացահայտման անհրաժեշտության գերակայող լինելը պարզորոշ ապացուցված է,
 - հանգամանքները խիստ կարևոր և **կենսական** անհրաժեշտության բնույթի են,
 - բացահայտման անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական սուր պահանջով,
 - պետություններն ունեն հայեցողության որոշակի ոլորտ անհրաժեշտության սահմանը գնահատելիս, բայց այն վերահսկվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանով:

Նույն Հանձնարարականի Բացատրական զեկույցում Նախարարների կոմիտեն մեկնաբանել է 3(բ) սկզբունքի «**գերակայող իրավաչափ նպատակ**» հասկացությունը՝ նշելով, որ դրա տակ պետք է հասկանալ.

- «անձի կյանքի պաշտպանության» անհրաժեշտություն,
- «ծանր հանցագործության կանխման» անհրաժեշտություն,
- «ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանության» անհրաժեշտություն³:

Այսպիսով, լրագրողական աղբյուրի բացահայտման պահանջը կարող է արդարացված լինել չորս տեսակի ծանր հանցագործությունների առնչությամբ. սպանություն, ծանր մարմնական վնասվածքների պատճառում, ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ և կազմակերպված հանցավորություն:

1. ԵԽՆԿ թիվ R(2000)7 Հանձնարարականի Բացատրական զեկույց. Կետ 38: Ամբողջական տեքստի համար տե՛ս. http://www.coe.int/t/dghl/standardset-ting/media/doc/cm/rec%282000%29007&expmem_EN.asp

«Գերակայող իրավաչափ նպատակ» հասկացությունը առավել կոնցեպտուալ եղանակով բացատրվել է նույն փաստաթղթի 36-րդ կետում, ըստ որի հաշվի առնելով ցանկացած ժողովրդավարական հասարակության և անհատի համար արտահայտվելու ազատության և մամուլի ազատության կարևորությունը, ինչպես նաև աղբյուրի բացահայտման պոտենցիալ սառեցնող ազդեցությունը աղբյուրների կողմից ապագայում տեղեկատվության տրամադրման վրա, աղբյուրի բացահայտումը կարող է արդարացված լինել միայն բացառիկ դեպքերում, երբ *«խաղատախտակի վրա է դրված անձնական կամ հասարակական կենսական շահը»*:

Վերը նշվածից բխում է, որ տեղեկատվության բացահայտումը պետք է լինի ոչ թե օրինաչափություն կամ պրակտիկա՝ կիրառելի ցանկացած հանցագործության նկատմամբ, այլ խիստ նեղ արտահայտված բացառություն? պայմանավորված այնպիսի հանցագործությամբ, որի կանխումը կամ բացահայտումը բխում է հասարակության քրեաիրավական բնույթի կենսական շահից: Վերը շարադրված չորս տեսակի հանցագործությունների կանխումը կամ դրանց առնչությամբ քրեական հետապնդում իրականացնելը իրավամբ ներկայացնում է հասարակական կենսական շահ:

Ի հակադրություն վերը նշվածի, **Խորհուրդը գտնում է**, որ խնդրո առարկա գործի նյութերում ոչինչ չի վկայում, որ «Հրապարակ» օրաթերթին առաջադրված պահանջը ներկայացվել էր այնպիսի հանցագործության առնչությամբ, որի բացահայտումը ներկայացնում էր հանրային կենսական անհրաժեշտություն: Նման պայմաններում գերակայում է աղբյուրի գաղտնիության լրատվամիջոցի իրավունքը: Հետևաբար, դատական ակտը, որով լրատվամիջոցից պահանջվել է բացահայտել լրատվական աղբյուրը, տեղեկություններ և գաղափարներ տարածելու լրատվամիջոցի իրավունքի անիրավաչափ միջամտություն է:

Կ Ա Ր Ծ Ի Բ 42

**Ռուզաննա Խաչատրյանն
ընդդեմ «Հրապարակ»
օրաթերթի գործի վերաբերյալ**

Հրապարակված է 2015թ.-ի հունիսի 30-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

«Հրապարակ» օրաթերթի 21.05.2015թ.-ի N 91 (1669) թողարկման մեջ հրապարակվել է «Հանրությունն ուզում է իմանալ» վերնագրով հոդված: Նույն օրը, նույն վերնագրով և նույնաբովանդակ հրապարակում եղել է նաև «Հրապարակ» օրաթերթի կայքում հետևյալ հղմամբ՝ <http://hraparak.am/?p=79894&l=am/hanrutyunvo>:

Հոդվածի բովանդակության մի հատվածը նշում է հետևյալը.

«որոշ լրատվամիջոցներ խորացան նախարարի եւ նրա տիկնոջ հարաբերություններում, պատմեցին նրանց «թեթև» ծանոթության եւ արտամուսնական երկարատեւ կապի մասին, հիշեցին եւ տարածեցին վաղուց մոռացված պատմություն այն մասին, թե ինչպես է մի կին, երբ նա դեռ հայտնի չէր, վարել իր մտերիմ ընկերոջ մեքենան եւ ջախջախել այն, վերջինիս մահվան պատճառը դառնալով: Նկատենք, որ այս պատմությունը վաղուց է շուրթից շուրթ փոխանցվել, իսկ տարիներ առաջ լրագրողները գրում էին քրեական այս դեպքի մասին, դրան հետևած քննության եւ դատաքննության, բայց ոչ ոք չէր հետաքրքրվում, թե ով է եղել այդ մեքենայի դեկին: Միայն հիմա, երբ պաշտպանության նախարարի նախագահ դառնալու հեռանկարն այսքան տեսանելի դարձավ, մութ պատմությունները ջրի երես դուրս եկան...ի վերջո, շոշափվել է անձնական կյանքը, որի իրավունքն անձեռնմխելի է, մյուս կողմից՝ սա կեղտոտ սպիտակեղեն է, որն ամոթ է լվանալ հանրության աչքի առաջ»:

Հոդվածը հրապարակվել է ՀՀ պաշտպանության նախարարի կնոջ Ռուզաննա Խաչատրյանի լուսանկարով: Վերջինս գտնում է, որ հոդվածում տեղ են գտել իր մասին վիրավորական և զրպարտող արտահայտություններ: Ըստ նրա փաստաբան Կարեն Մեժլումյանի, լրատվամիջոցը չի պատասխանել Ռուզաննա Խաչատրյանի՝ լրատվամիջոցին ուղղված հերքման պահանջին: Կարեն Մեժլումյանը դիմել է Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ խնդրելով տրամադրել եզրակացություն առանց Ռուզաննա Խաչատրյանից փաստերը ձշտելու հրապարակում կատարելու, հերքման պահանջին չարձագանքելու, ինչպես նաև սույն ոլորտին առնչվող իրավական կարգավորումների և մասնագիտական էթիկայի պահանջների մասին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Հաշվի առնելով, որ սույն գործով դատական քննությունը դեռ չի սկսվել և այն հանգամանքը, որ գործն ունի հասարակական մեծ հնչեղություն, Խորհուրդը ձեռնպահ է մնում փաստերի գնահատումից և դրա փոխարեն նախընտրում է արտահայտել կարծիք հանրային դեմքերի, պաշտոնատար անձանց անձնական կյանքի վերաբերյալ լրատվության, քննադատության շրջանակների մասին:

Վեճն առնչվում է, առաջին, պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների մասին հանրային հետաքրքրություն ներկայացնող փաստերի շուրջ տեղեկատվություն տրամադրելու լրագրողական ազատությանը, երկ-

րորդ, նշված անձանց անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, երրորդ, հանրային նշանակության և հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի մասին հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքին: Վերջինի առումով նման տեղեկություններ տրամադրելու պարտականությունը դրված է լրատվամիջոցների ու լրագրողների վրա:

Անկասկած է, որ անձնական ու ընտանեկան կյանքի վերաբերյալ ցանկացած լրատվություն միջամտություն է անձնական կյանքի իրավունքին: Այդուհանդերձ, միջամտությունը կարող է իրավաչափ լինել, եթե տվյալ հանգամանքների ներքո դա «անհրաժեշտ է»: Որոշելու համար, թե արդյոք միջամտությունը հիմնվել է այնպիսի բավարար հիմքերի վրա, որոնք միջամտությունը դարձրել են «անհրաժեշտ», հարկ է հաշվի առնել գործի հանրային նշանակության հանգամանքը (*Bladet Tromsø and Stensaas v. Norway*, թիվ 21980/93, 20/05/1999, § 62¹):

Այսպիսով, պաշտոնատար անձի հանրային դեմքի անձնական կյանքի շրջանակը, այդ թվում նրա ընտանիքի անդամների հետ կապված դեպքերը, իրադարձությունները, նույնպես կարող են լինել լրագրողական ազատության օբյեկտ՝ այնքանով, որքանով դա կապ ունի այդ անձի հանրային գործառույթների, հանրային նշանակության որոշումների ու գործողությունների հետ: Այս իմաստով հատկապես կարևոր է, թե արդյոք անձնական կյանքի որևէ դրվագի վերաբերյալ տեղեկատվությունը ուղղված է եղել որևէ հարցի շուրջ ծավալված հանրային բաց բանավեճի ծավալմանը, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդրի, երևույթի շուրջ հանրային քննարկմանը լրացնելուն:

Այդուհանդերձ, նույնիսկ վերը նշված ազատությունը ենթակա է սահմանափակման: Ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի երաշխավորում ամբողջովին անսահմանափակ արտահայտվելու ազատություն նույնիսկ մամուլի այն հրապարակումների առնչությամբ, որոնք վերաբերում են լուրջ հանրային հետաքրքրության խնդրի: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը ենթադրում է «պարտավորություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ և որոնք ենթադրում են, որ ընդհանուր հետաքրքրության խնդիրների մասին տեղեկություններ հայտնելու կապակցությամբ լրագրողներին տրամադրվող պաշտպանությունը ենթակա է այն նախապայմանին, որ լրագրողները գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու համար ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն՝ լրագրողական էթիկայի նորմերին համապատասխան²: Այս նախադեպային դրույթը լայն կիրառություն ունի պրակտիկայում՝ հատկապես լրագրողական կազմակերպությունների ինքնակարգաորման փաստաթղթերում:

1. Վկայակոչված է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշումից, կետ 10:

2. ՍԴՈ-997, կետ 10, պարբ. 6:

Երևանի մամուլի ակումբի շրջանակներում գործող Դիտորդ մարմնի՝ «ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի» 1-ին բաժինը ամբողջությամբ վերաբերում է տեղեկատվություն տարածելիս ճշգրտության և անկողմնակալության սկզբունքներին:

Այսպիսով, լրագրողական բարեխղճությունը համընդհանուր նախապայման է և լրագրողական ազատության պաշտպանական որևէ համակարգի ձևական առկայությունը (փաստի մասին հայտարարություն, գնահատող դատողություն, անոնիմ մնալու իրավունքի իրացում, և այլն) չի կարող գերակայել այս ընդհանուր նախապայմանը: Սրա մասին է վկայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի վերջին վճիռը Դելֆին ընդդեմ Էստոնիայի գործով:

Հաշվի առնելով վերը նշվածը, **Խորհուրդը գտնում է**, որ վիճահարույց հոդվածում հանրային դեմքի անձնական, ընտանեկան կյանքի որևէ դրվագի վերաբերյալ տեղեկատվության տարածումը չի կարող ինքնին կասկածի տակ դնել նման տեղեկատվության իրավաչափության հարցը: Շատ բան կախված կլինի նրանից, թե դատաքննության ընթացքում լրատվամիջոցը որքանով կկարողանա հիմնավորել, որ լրագրողը գործել է բարեխղճությամբ, որ տեղեկատվությունը ուղղված չի եղել ընթերցողների նեղ խմբի անձնական հետաքրքրասիրությունը բավարարելուն, այլ լրացնում էր հանրային հետաքրքրություն ներկայացնող որևէ հարցի հանրային քննարկմանը:

Կ Ա Ր Ծ Ի Թ 43

**Ոստիկանությունն ու դրա
աշխատակիցներն ընդդեմ Վիլեն
Գայֆեջյանի գործի վերաբերյալ**

Հրապարակված է 2015թ.-ի հունիսի 30-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համահայցվորների՝ ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ Հովհաննես Քոչարյանը, ոստիկանության աշխատակիցներ Արթուր Մաղաթյանը և Սերգեյ Զաքարյանը: Հայցը ներկայացվել է ընդդեմ քաղաքացի Վիլեն Գայֆեջյանի՝ հետևյալ փաստական հանգամանքների շրջանակներում:

2015 թվականի մայիսի 24-ին www.blog.1in.am կայքում հրապարակվել է «11 SOS-Գ/7» վերնագրով տեսանյութ, որի սկզբնաղբյուրը՝ <http://blog.1in.am/140998.html> հասցեի նշումով տեղադրված է եղել <https://www.youtube.com/watch?v=uHx5erHm5YE> հասցեի ներքո: Տեսանյութում հաղորդավար Վիլեն Գայֆեջյանը մեկնաբանում է ՀՀ Նախագահի նստելավայրի առջև ծառայություն կատարող ոստիկանների գործողությունները, երբ նրանք ֆիզիկական ուժ կիրառելով բողոքի ակցիա իրականացնող մի խումբ քաղաքացիների հեռացնում էին Նախագահի նստելավայրի մուտքի մոտից: Հայցվորները գտնում են, որ տեսանյութում հաղորդավարը օգտագործել է հայցվորների պատիվը և արժանապատվությունը արատավորող արտահայտություններ:

Մասնավորապես, հաղորդավարը ողջույնի խոսքերը սկսում է հետևյալ արտահայտությամբ.

«Սիրելի հայրենակիցներ, եթերում Գ ու հենց-ընենց յոթ հաղորդաշարի առաջին թողարկումն է»:

Իսկ տեսանյութի 28-րդ վայրկյանում հաղորդավարը, աջ ձեռքի շարժումով ցույց տալով ուսադիրը, ասում է. *«մենք՝ Գ ու հենց ընենց յոթերս, ՀՀ քաղաքացու պաշտպաններն ենք, ծառաներն ու բարեկամները»* արտահայտություն:

Տեսանյութի 44-րդ վայրկյանում հաղորդավարը հնչեցնում է հետևյալ արտահայտությունը. *«վերջերս մեր զաբոռասպատման բաժին ահագանգ եղավ»* արտահայտությունը, որից անմիջապես հետո տեսանյութում ցուցադրվում է ՀՀ նախագահի նստավայրի առջև տեղադրված երկայթա ճաղավանդակները և այդտեղ ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների պատկերները:

Տեսանյութի 3:00 րոպեում կատարվում է 02 լրատվական հաղորդաշարի մի դրվագի մեջբերում, որտեղ հաղորդավարի հրաժեշտի խոսքից և երկու հայցվորների գործողությունների ցուցադրումից անմիջապես հետո 3:10-րդ րոպեին պատասխանողը օգտագործում է *«շան տղերք»* արտահայտությունը:

Հայցվորները, ի թիվս այլ փաստարկների, գտնում են, որ պետությունը նույնպես կարող է հանդես գալ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ և հայցել իրավական պաշտպանություն իր բարի համբավը (*ըստ ՀՀ Սահմանադրության*) կամ գործարար համբավը (*ըստ*

Քաղաքացիական օրենսգրքի) արատավորելու համար: Ի հավելումն, հայցվորները գտնում են, որ տեսանյութի վիրավորական արտահայտությունները հավաքական իմաստով ուղղված էին ՀՀ ոստիկանությանը և որ պատասխանողը իր գործողություններով նպատակ է ունեցել նսեմացնել ՀՀ ոստիկանության բարի համբավը: Նման հանգամանքներում հայցվորները գտնում են, որ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ոստիկանության, իրավունք է ստանում հանդես գալ որպես հայցվոր Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով և հայցել իրավական պաշտպանություն ոստիկանության բարի համբավը արատավորող հրապարակային հայտարարություններից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Սույն գործում որպես հայցվորներ հանդես են գալիս Հայաստանի Հանրապետությունը և մի շարք պաշտոնատար անձինք: Այս իմաստով այս դատական գործը տարբերվում է մնացած գործերից, որոնց վերաբերյալ Խորհուրդը նախկինում արտահայտել է կարծիք:

Խորհուրդը գտնում է, որ պետական մարմինները և հանրային պաշտոնյաները պետք է ձեռնպահ մնան վիրավորանքի ու զրպարտության գործերով որպես հայցվորներ հանդես գալուց: Այս հարցին սպառնիչ պատասխան է տվել ՀՀ Սահմանադրական դատարանը, որն իր ՍԴՈ-997 որոշման մեջ, որում վերջինս բացահայտեց Քաղաքացիական դատավարության 1087.1 հոդվածի բոլոր դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, նշել է, որ 1087.1 հոդվածի իմաստով *«անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, և «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ»:*

Այս դիրքորոշմամբ ՍԴ-ն բացառել է պետական մարմինների միջամտությունը վիրավորանքի ու զրպարտության դատական գործերում: Ընդ որում, պետական մարմինների չմիջամտելու սկզբունքը ՍԴ-ն համարում է որպես յուրաքանչյուրի ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատության իրականացման կարևոր երաշխիք:

Պետական մարմինների չմիջամտության սկզբունքը ամրագրված է մի շարք պետությունների իրավակիրառ պրակտիկայում և տարածվում է ինչպես պետական, այնպես էլ ընտրովի մարմինների, պետական ձեռնարկությունների և նույնիսկ քաղաքական կուսակցությունների վրա:

Այս սկզբունքի պահպանումը քաղաքական կամքի դրսևորում է առ այն, որ իշխանությունները գնահատում են պետական ու հանրային մարմինների բաց քննադատության կարևորությունը ժողովրդավարական հասարակարգում, այդ մարմինների հեղինակության իրավունքի սահմանափակ շրջանակը ու դրա հանրային բնույթը:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ հանրային մարմիններն ունեն պաշտպանվելու լայն ռեսուրսներ՝ մի բան, որը հաճախ հասու չէ սովորական քաղաքացիներին: Այս առումով մտահոգության առարկա է այն հանգամանքը, որ պետական մարմինները վիրավորանքից կամ զրպարտությունից պաշտպանվելիս օգտագործում են հանրային ռեսուրսներ՝ սահմանափակվելու համար մի իրավունք (տեղեկատվության ազատ հոսքը), որն ի վերջո նույնպես հանրային նշանակություն ունի:

Ի մի բերելով վերը նշվածը, **Խորհուրդը գտնում է**, որ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ ոստիկանության, չի կարող սույն գործով հանդես գալ որպես հայցվորներ: Ինչ վերաբերում է մյուս հայցվորներին, նրանք կարող են հանդես գալ որպես ֆիզիկական անձինք և դատական պաշտպանության իրենց իրավունքները իրականացնելիս չպետք է օգտագործեն հանրային ռեսուրսները:

Կ Ա Ր Ծ Ի Զ 44

**«Հրապարակային արտահայտություն»
հասկացությանը՝ դատարանի տված
մեկնաբանության վերաբերյալ**

Հրապարակված է 2015թ.-ի օգոստոսի 30-ին

Ներկայումս ընթացքի մեջ գտնվող թիվ ԵԱԲԴ/1548/02/12 դատական գործով Քաղաքացիական վերաքննիչ դատարանը տվել է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով սահմանված «հրապարակային արտահայտություն» հասկացության մի մեկնաբանություն, որի վերաբերյալ խորհուրդը անհրաժեշտ է համարում արտահայտել կարծիք:

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Նշված գործով պատասխանող Հրաչյա Հարությունյանը զբաղեցրել է «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (*այսուհետ՝ Ընկերություն*) անվտանգության և վերահսկողության տնօրենի տևակալի պաշտոնը: Իր աշխատանքային գործունեության ընթացքում Հրաչյա Հարությունյանը բացահայտել է ընկերության տարբեր աշխատակիցների կողմից խոշոր չարաշահումների վերաբերյալ բազմաթիվ փաստեր, որոնց վերաբերյալ որոշել է տեղյակ պահել Ընկերության ղեկավարությանը: Այդ նպատակով չարաշահումների մասին իր վերլուծությունները, գրավոր փաստաթղթերը 2012 թվականի մարտ ամսին Ընկերության ինտերնետ կայքի թեժ գծով, էլեկտրոնային եղանակով ուղարկել է Ընկերության տնօրենների խորհրդին: Ընկերության ինտերնետային կայքի «Կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի էջում ընթերցողների, կայքի այցելուների համար տեղադրված էր հետևյալ հայտարարությունը.

«Անձինք, ում հայտնի են գործողություններ, որոնք պատճառել են կամ կարող են պատճառել նյութական վնաս կամ վնասել «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ԲԲ ընկերությանը, այդ տեղեկությունների մասին կարող են հայտնել թեժ գծին՝ կայքում նշված էլեկտրոնային հասցեներով: Տվյալ անձանց դիմումները օպերատիվորեն կստանան ներքին աուդիտի, կոնտրոլինգի և ռիսկերի ղեկավարման Բլոկը, որն անմիջապես ենթարկվում է Տնօրենների խորհրդին և անկախ է մենեջմենթին: Շարադրված փաստերով կանցկացվի անկախ ստուգում, ընդ որում, իրենք երաշխավորում են, որ ստացված տեղեկությունները կմնան անանուն (կապահպանվի գաղտնիության ռեժիմը):»:

Մի քանի ամիս անց անց Ընկերության անվտանգության և վերահսկողության հարցերով տնօրենը զանգահարում է Հրաչյա Հարությունյանին և առաջարկում է հանդիպել: Հանդիպման ընթացքում, որին որևէ երրորդ անձ չէր մասնակցում, անվտանգության տնօրենը ցույց է տալիս իր մոտ եղած տպած տեքստերը և փաստաթղթերը և հարցնում, թե արդյոք նա է այն անձը, ով նշվածը ուղարկել է ընկերության ինտերնետ կայքի թեժ գծով, որին Հ. Հարությունյանը դրական պատասխան է տալիս: Անվտանգության տնօրենը առաջարկում է նրան ստորագրել փաստաթղթերի և հայտարարության տակ որպես հավաստիացում, որ հայտարարության հեղինակը Հ. Հարությունյանն է, որին վերջինս համաձայնվում է և ստորագրում:

Մի որոշ ժամանակ անց ընկերության մեկ այլ աշխատակից դատական հայց է ներկայացնում Հ. Հարությունի դեմ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով՝ նրան մեղադրելով իր հասցեին վիրավորական և զրպար-

տող բնույթի հայտարարությունների տարածելու մեջ: Ղատական վարույթի ընթացքում Հ. Հարությունյանը պնդել է, որ դիմումը ենթակա է մերժման, քանի որ ինքը հրապարակային հայտարարություններ չի կատարել: Վեճի առարկա հայտարարությունները և տեքստերը ուղարկել է Ընկերությանը ոչ հրապարակային եղանակով՝ համացանցով և գաղտնիության բոլոր պայմանների ապահովմամբ, իչպես նաև ընկերության պաշտոնատար անձի հետ հանդիպման ժամանակ, որ դեպքում նույնպես որևէ երրորդ անձ ներկա չի եղել և այդ հանդիպումն էլ է անցել գաղտնիության, ոչ հրապարակային պայմաններում:

Առաջին ատյանը ընդունել է այս պնդումը և դատական հայցը այդ հիմքով մերժել: Սակայն Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի վճիռը և գործը ուղարկել նույն դատարան նոր քննության: Վերաքննիչ դատարանը իր որոշումը հիմնավորել է նրանով, որ առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել 1087.1 հոդվածի «հրապարակային արտահայտություն» հասկացությունը: Վերաքննիչ դատարանը գտել է որ 2012թ.-ի մարտ ամսին համացանցի միջոցով Ընկերությանը գաղտնապահության եղանակով ուղարկած հայտարարությունը մի քանի ամիս անց Ընկերության աշխատակցի հետ հանդիպման համատեքստում համարվում է հրապարակային հայտարարություն:

ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄ

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի դրույթներում սահմանված «հրապարակային արտահայտություն» հասկացությունը այս հոդվածի կիրառության նախապայմաններից մեկն է, եթե ոչ՝ ամենակարևոր նախապայմանը: Ցանկացած գործով այս հոդվածի կիրառելիության հարցը որոշելիս առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վիճահարույց հայտարարությունը տարածվել է հրապարակային եղանակով, թե՛ ոչ: Հաշվի առնելով դրա կարևորությունը, Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-997 որոշման մեջ մեկնաբանել է այս հասկացությունը, սահմանելով, որ «Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը կոչված է հանրության առջև առնվազն երրորդ անձի ներկայությամբ անձին հանիրավի անվանարկելու հետևանքների հաղթահարմանը»¹: Այսինքն, ըստ Սահմանադրական դատարանի, *հայտարարությունը բոլոր դեպքերում պետք է կատարված լինի առնվազն մեկ այլ անձի ներկայությամբ*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես մեկնաբանել է այս հասկացությունը: Մասնավորապես, թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով կայացրած իր որոշման մեջ վերջինս սահմանել է, որ «*հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները*»²:

1. Տե՛ս սույն դիմումի 4-րդ էջը:

2. Տե՛ս որոշման 8-րդ էջի վերջում և 9-րդ էջի սկզբում, ինչպես նաև 9-րդ էջի 2-րդ պարբերության հստակ ձևակերպումը:

Այսինքն, Վճռաբեկ դատարանը կարևորել է հնչեցված հայտարարության՝ երրորդ անձի ներկայությամբ կատարված լինելու հանգամանքը որպես հրապարակայնության անհրաժեշտ պայման: Այս գաղափարը կրկին շեշտվել է նույն պարբերությանը հաջորդող պարբերության մեջ, որտեղ Վճռաբեկ դատարանը, հրապարակային արտահայտության իրականացման եղանակները բացատրելիս, շեշտել է հնչեցված արտահայտության այնպիսի եղանակը, որի դեպքում առնվազն մեկ այլ անձ «*հաղորդակից*» է դարձվում հնչեցված խոսքին: Այսինքն, եթե հրապարակայնության առումով նախապայման է, որ առնվազն մեկ անձ «*հաղորդակից*» դարձված լինի հնչեցված խոսքին, ապա դա պետք է կատարված լինի բացառապես հնչեցման պահին, այլ ոչ թե այլ պահի՝ հետագայում: Հենց այդ նպատակով է Վճռաբեկ դատարանը իր նախադեպային սահմանման մեջ օգտագործել «*ներկայությամբ*» արտահայտությունը: Ի տարբերություն նշված կարգավորումների, Հրաչ Հարությունյանի գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտել է, որ «*«մեկ երրորդ անձի» հասկացությունն ինքնին հանգում է «տուժողից» և «գրպարտողից» տարբեր մեկ այլ անձի մոտ տեղեկություններ ներկայացնելուն*»: Այստեղ խառնաշփոթ է առաջացնում «*ինքնին*» բառը. ստացվում է, որ նույնիսկ եթե արտահայտությունը մեկ անձից երկրորդին ասվել է գաղտնապահության պայմաններում և առանց երրորդ անձի, եթե նույն արտահայտությունը հետագայում ասվել է կամ հաղորդակից է դարձվել որևէ երրորդ անձի, բայց կրկին գաղտնապահության պայմաններում, արդեն իսկ բավարար հանգամանք է, որ առաջին արտահայտությունը երկրորդի հետ միասին համարվի հրապարակային՝ անկախ այն հանգամանքից, որ ո՛չ առաջին հայտարարության, ո՛չ էլ երկրորդ հայտարարության ժամանակ որևէ երրորդ անձ ներկա չի եղել և հաղորդակից դարձված չի եղել այդ արտահայտություններին: Վերաքննիչ դատարանի կողմից «*ինքնին*» հասկացության կիրառումը և դրա հիման վրա տրված մեկնաբանությունը իրավակիրառ պրակտիկայում նորություն է: Նման հասկացություն սահմանված չէ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում, և ոչ էլ նման հասկացություն երբևէ սահմանվել է Սահմանադրական դատարանի կամ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Խորհուրդը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը առերևույթ հակասում է Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դիրքորոշումներին: Ավելին, նման մեկնաբանությունը իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել է իրավական անորոշության, քանի որ միևնույն արտահայտության վերաբերյալ առկա են դատարանների երկու՝ միմյանց հակասող մեկնաբանություններ, մինչդեռ իրավական որոշակիության սկզբունքը իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից է:

Եվ վերջապես, Քաղաքացիական վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը էապես վտանգում է աշխատավայրում խախտումների մասին տեղեկացնող աշխատակիցների պաշտպանությունը (*whistleblower protection*), որի առումով Եվրախորհուրդը հորդորում է անդամ պետություններին իրենց ներպետական իրավական համակարգում ամրագրել նման անձանց պաշտպանության համար «*նորմատիվ, ինստիտուցիոնալ և դատական կառուցակարգեր*»:

Կ Ա Ր Ծ Ի Ք 45

Դատաքննության
հրապարակայնության վերաբերյալ

Հրապարակված է 2015թ.-ի սեպտեմբերի 30-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Լրագրող Արման Սուլեյմանյանը 2014թ.-ի մայիսից լուսաբանել է ՀՀ քաղաքացի Դավիդ Հակոբյանի վեցամյա որդու խնամակալությանը վերաբերող դատական գործը: Դատական գործի քննությունը ընթացել է դմբաց: 2014թ.-ի հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել դատական ակտի որոշման հրապարակումը, որի ընթացքում լրագրողը փորձել է տեսանկարահանել որոշման եզրափակիչ մասի հրապարակումը:

Դատարանը արգելել է կատարել տեսանկարահանում: Դատարանը տեսանկարահանման արգելքը չի պատճառաբանել: Լրագրողը դատարանի աշխատակազմից խնդրել է ստացել է դատական ակտի հրապարակման նիստի ձայնագրությունը, որում առկա չէ եղել դատական ակտի հրապարակումը տեսանկարահանելու վերաբերյալ դատարանի արգելքը: Լրագրողը դատարանի արգելքի վերաբերյալ որոշումը վիճարկել է վարչական դատարանում՝ առանձին դատական վարույթով, սակայն այս դատարանը և վերադաս ատյանները մերժել են հայցվորի բողոքները: Դատական քննությունն ավարտվել է:

Սույն գործով հայցվորի շահերը դատարանում ներկայացրել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Դատաքննության հրապարակայնությունը կամ հրապարակային դատաքննության իրավունքը հիմնարար իրավունք է, որը լրատվության միջոցների համար կարող է սահմանափակվել հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով¹: Դատելով նրանից, որ դատավարությունը եղել է դմբաց, նշված հիմքերից ոչ մեկը առկա չի եղել: Հետևաբար, դատական ակտի հրապարակման տեսաձայնագրման արգելքը իրավաչափ չի եղել, որի արդյունքում խախտվել է լրագրողի տեղեկություններ տարածելու իրավունքը:

Բացի նշվածից, տեղի ունեցածը շոշափում է նաև հանրային իրավահարաբերությունների մասին հարց: Հայտնի է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դատական ակտի հրապարակայնությունը կապում է դատաքննության հրապարակայնության սկզբունքի հետ: Դատաքննության հրապարակային բնույթը օգնում է, որպեսզի հասարակությունը կարողանա իրականացնել հասարակական վերահսկողություն արդարադատության իրականացման նկատմամբ, որը համարվում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը:

Ինչպես ասվում է հայտնի թևավոր խոսքում, արդարադատություն ոչ միայն պետք է իրականացվի, այլ նաև տեսանելի լինի, թե ինչպես է իրականացվում: Անկասկած է, որ այս պայմանի իրականացման մեջ լրատվամիջոցներ-

1. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված:

րը և լրագրողները ունեն իրենց անփոխարինելի դերակատարումը: Հետևաբար, դատական ակտը հրապարակայնացնելու լրագրողի իրավունքի սահմանափակումը անկասկած միջամտություն տեղեկատվություն ստանալու և դատարանների գործունեությունը վերահսկելու հանրային ընդհանուր շահին:

Վերը նշված երկու նկատառումները հաշվի առնելով, **Խորհուրդը գտնում է**, որ դատարանի գործողությունները, մասնավորապես, դատական ակտի հրապարակայնացման տեսաձայնագրման արգելքը, խախտել է տեղեկատվություն ստանալու հանրային շահը և տեղեկություններ տարածելու լրագրողի իրավունքը:

Կ Ա Ր Ծ Ի Ք 46

**Մարդու իրավունքների եվրոպական
դատարանի Մեծ պալատի
Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի գործով
վճռի կապակցությամբ**

Հրապարակված է 2015թ.-ի հոկտեմբերի 20-ին

2015 թվականի հոկտեմբերի 15-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը կայացրեց Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճիռը, որում արտահայտեց կարևոր դիրքորոշումներ ազատ խոսքի մի շարք սկզբունքների մասին: Հաշվի առնելով վճռի նկատմամբ հանրային հետաքրքրությունը, ինչպես նաև ազատ արտահայտվելու իրավունքի վերաբերյալ դատարանի արտահայտած դիրքորոշումների կարևորությունը, Խորհուրդը անհրաժեշտ համարեց արտահայտել դիրքորոշում վճռում բարձրացված մի շարք հարցերի վերաբերյալ:

ՎՃՌԻ ՀԱՍՈՒՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի քաղաքական գործիչ և Աշխատավորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքը 2005թ.-ի Շվեյցարիայի Լոզան քաղաքում կազմակերպված հանրահավաքում ելույթ ունենալիս 1915թ.-ի հայերի ցեղասպանությունն անվանել է «միջազգային սուտ», որը հորինել են Անգլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի իմպերիալիստներն առաջին համաշխարհային տարիների ընթացքում Օսմանյան Թուրքիան մասնատելու նպատակով: Իրենց այդ նպատակին հասնելու համար, ըստ Դողու Փերինչեքի, իմպերիալիստները հորդորեցին հայերին դիմել բռնությունների և Թուրքիայի մուսուլմանները, թուրքերը և քրդերը, ստիպված եղան դիմել ինքնապաշտպանության, որի արդյունքում տեղի ունեցան ընդհարումներ և կոտորածներ: Նա այս ամենը համեմատեց Գերմանիայում Հիտլերի կողմից տարվող քաղաքականության հետ և վերջում կոչ արեց չհավատալ «*հիտլերյան ոճի այնպիսի ստի, ինչպիսին է հայերի ցեղասպանությունը*»:

Այս հայտարարությունների համար Դ. Փերինչեքը ենթարկվեց քրեական պատասխանատվության Շվեյցարիայի դատարանի կողմից: Նա ենթարկվեց տուգանքի, որը կարող էր փոխարինվել 30-օրյա կալանքի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը գտավ, որ ցեղասպանությունը, որպես պատմական փաստ, հրապարակավ հերքելիս՝ Փերինչեքն իրականացնում էր ազատ արտահայտվելու իր իրավունքը, և քանի դեռ հրապարակային հայտարարությունը ռասիստական բնույթի ատելության խոսք չէր, պատմական փաստի հերքման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելն ազատ արտահայտվելու իրավունքի խախտում է:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Վճիռը վերաբերում է արդեն տևական ժամանակ միջազգային իրավունքում քննարկման առարկա հանդիսացող հարցին. արդյոք իրավաչափ է ազատ խոսքի պաշտպանության տակ վերցնել նաև ցեղասպանության հերքումը (genocide deniers): Այդ առումով բախվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատության իրավունքը և 17-րդ հոդվածով սահմանված իրավունքների չարաչափման արգելքը: Համաձայն վերջինի՝ կոնվենցիայով սահմանված որևէ դրույթ (օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքը) չի կարող մեկնաբանվել այն իմաստով, որ իրավունք վերապահի կատարել գործողու-

թյուններ, որոնք ուղղված կլինին Կոնվենցիայով սահմանված որևէ իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսվում է Կոնվենցիայով:

Միջազգային իրավունքն արտահայտվելու ազատության իրավունքը սահմանափակում է երկու եղանակով՝ որակապես և բացարձակապես: Առաջինը թույլ է տալիս իրավունքը սահմանափակել մասնակիորեն՝ կախված միջամտության օրինականությունից, նպատակից և հասարակական անհրաժեշտությունից: Երկրորդը թույլ է տալիս իրավունքը սահմանափակել բացարձակ կերպով, և միջազգային պայմանագրերը¹ մատնանշում են նման սահմանափակման հետևյալ հիմքեր.

- 1) ատելության խոսք (ազգային, ռասայական, կրոնական պատկանելիության հատկանիշներով),
- 2) պատերազմի քարոզչություն,
- 3) աստվածանարգություն,
- 4) որոշակի պատմական փաստերի (օրինակ՝ մարդկության դեմ կատարված հանցագործության, օրինակ՝ ցեղասպանության) հերքում:

Տևական ժամանակ է, ինչ իրավաբան-գիտնականները պնդում են, որ վերջին հիմքը (ցեղասպանության հերքումը) անհրաժեշտ է դուրս բերել ազատ խոսքի բացարձակ արգելքի տակից, և արգելքը դարձնել որակական (արգելքի կիրառումը որոշակի հանգամանքների ներքո), քանզի անձը պետք է իրավունք ունենա կասկածի տակ առնելու ցանկացած պատմական փաստ:

2011թ. հուլիսի 11-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ժնկում ընդունած իր թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունում, որը նվիրված էր Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի մեկնաբանությանը, սահմանեց հետևյալը.

«Օրենքները, որոնք քրեականացնում են պատմական փաստերի վերաբերյալ կարծիքների արտահայտումը, անհամատեղելի են այն պարտականությունների հետ, որոնք Ղաշնագիրը սահմանում է Անդամ Պետությունների համար արտահայտվելու և կարծիքների ազատության վերաբերյալ: Ղաշնագիրը չի թույլատրում անցյալի դեպքերի սխալ մեկնաբանման կամ դրանց վերաբերյալ արտահայտած սխալ կարծիքի համընդհանուր արգելք: Արտահայտվելու ազատության նկատմամբ սահմանափակումներ երբեք չպետք է կիրառվեն և նման սահմանափակումները երբեք չպետք է լինեն ավելին, քան թույլատրվում է [19-րդ հոդվածի] երրորդ պարբերությամբ կամ պահանջվում 20-րդ հոդվածի ներքո»²:

1. Օրինակ՝ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 20:

2. Մարդու իրավունքների կոմիտե. Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34: Հոդված 19. Արտահայտվելու և կարծիք հայտնելու ազատություն: Կետ 49:

Ղաշնագրի 19-րդ հոդվածի երրորդ պարբերությունը, որը վկայակոչվում է վերևում, սահմանում է ազատ խոսքի սահմանափակումներ

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության, կամ բարոյականության պաշտպանության համար:

Իսկ 20-րդ հոդվածն արգելում է խոսքի այնպիսի տեսակներ, ինչպիսին են պատերազմի քարոզչությունը և ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունը, որն ուղեկցվում է խտրականությամբ, թշնամանքի կամ բռնության հրահրմամբ:

Այսպիսով, Մարդու իրավունքների կոմիտեն առաջարկում է բացարձակ արգելքի հիմքերի շրջանակից դուրս հանել պատմական փաստի, այդ թվում նաև ցեղասպանության հերքման համար պատասխանատվությունը՝ բացառությամբ, եթե հերքումը կատարվում է ոչ թե ճշմարտության բացահայտման նպատակով, այլ պատերազմի քարոզչության, ազգային, ռասայական կրոնական ատելության շարժառիթով, ինչպես նաև եթե դրանք ուղեկցվում են խտրականությամբ, թշնամանքի կամ բռնության հրահրմամբ:

Խորհուրդը գտնում է, որ Փերինջեքի գործով վճռի մեկնաբանումը պետք է կատարվի այս լույսի ներքո:

Վերը նշվածից բխում է, որ էական հանգամանք է պատմական փաստը հերքելու անձի շարժառիթը: Եթե արտահայտվելու ազատությունն իրականացվում է անձի կամ անձանց որոշակի խմբի նկատմամբ ատելության շարժառիթով, նման խոսքը չի կարող տեղավորվել արտահայտվելու ազատության, այդ թվում նաև լրագրողական ազատության շրջանակներում: Խորհուրդը նախկինում անդրադարձել է ատելության խոսքի և լրագրողական ազատության հարաբերակցության հարցին իր թիվ 38 և 40 որոշումներում և այդ առումով վերահաստատում է իր դիրքորոշումը, որ ատելության խոսքը չի կարող անցնել ազատ խոսքի պաշտպանության տակ:

Վերը նշվածի լույսի ներքո, մեկնաբանելով Եվրոպական դատարանի վճիռը Փերինջեքի գործով, **Տեղեկատվական վեճերի Խորհուրդը ցանկանում է ուշադրություն հրավիրել** այն հանգամանքի վրա, որ դատական ակտում վիճահարույց հրապարակային հայտարարության շարժառիթը ոչ բավարար չափով է ուսումնասիրվել ու գնահատվել դատարանի կողմից: Անկասկած է, որ Փերինջեքն իրականացնում էր ազատ արտահայտվելու իր իրավունքը 1915 թվականի դեպքերը որպես ցեղասպանություն հրապարակավ հերքելիս: Այդուհանդերձ, դատարանը բավարար ջանքեր չի գործադրել պարզելու համար այդ անձի իրական դրդապատճառները պատմական փաստը հերքելիս, մասնավորապես, թե արդյոք նրա նպատակն էր ճշմարտության բացահայտումը, թե ժխտողականությունը: Նույնիսկ փաստերի մակերեսային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրահավաքում իր հրապարակային խոսքը բացառապես քաղաքական բանավեճի շրջանակներում ներկայացնելը զուտ ձևական բնույթ է կրել, քանզի նրա ողջ նախկին գործունեությունը որպես քաղաքական գործիչ ունեցել է հստակ ընդգծված ռասիստական բնույթ:

Կ Ա Ր Ծ Ի Ը 47

Վահրամ Պետրոսյանն ընդդեմ

www.blognews.am առցանց

լրատվական կայքի գործի վերաբերյալ

Հրապարակված է 2015թ.-ի նոյեմբերի 20-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2015թ.- սեպտեմբերի 20-ին «BlogNews.am» առցանց լրատվական կայքում հրապարակվել է «Փաստեր ունեն մարդիկ, որ Սայաթ Նովան ադրբեջանցի է. Վահրամ Պետրոսյան (տեսանյութ)» վերնագրով տեսանյութ: Դատարան դիմելու օրվա դրությամբ տեսանյութը դիտվել է 11,988 անգամ: Տեսանյութը հարուցել է շատ ընթերցողների քննադատությունը, որոնցից ոմանք տեսանյութի տակ թողել են քննադատական, ծաղրական և առերևույթ վիրավորական մեկնաբանություններ (քոմենթներ) հայցվորի մասին¹:

Դիմելով դատարան հայցվորը խնդրել է դատարանից պարտավորեցնել պատասխանող լրատվամիջոցին հեռացնել վիրավորական քոմենթները իր էջից: Դատական քննությունը ընթացքի մեջ է:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Սույն դատական վեճի առարկան կայանում է նրանում, թե արդյոք առցանց լրատվամիջոցը կարող է պատասխանատվություն կրել իր հարթակում հրապարակված այլ անձի (երրորդ կողմի) հեղինակած խոսքի համար:

www.blognews.am լրատվական կայքը լրատվամիջոց է, որը ոչ թե հրապարակում է իր հեղինակած հոդվածները, այլ վերահրապարակում է այլ հարթակներից տարածված լրատվանյութերը: Լրատվամիջոցը օգտվում է առցանց լրատվամիջոցներից, սոցիալական ցանցերից և այլ հրապարակային աղբյուրներից: Որպես կանոն, լրատվամիջոցը վկայակոչում է աղբյուրը, որտեղից օգտվել է լրատվանյութը վերահրապարակելիս:

Ըստ լրատվամիջոցի, կայքում հրապարակված նյութերը չեն խմբագրվում և չեն փոփոխվում: Այսպիսով, լրատվամիջոցը օգտվում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասով սահմանված հնարավորությունից, ըստ որի անձը ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր հրապարակած նյութը այլ անձի (երրորդ կողմի) հրապարակային ելույթի կամ լրատվության այլ միջոցի բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին՝ հեղինակին, իսկ իրավաբանորեն՝ երրորդ կողմ: Հեղինակ հասկացությունը մեկնաբանել է ՀՀ վճռաբեկ դատարանը, ըստ որի «հեղինակը» պետք է լինի կոնկրետ ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

«Երրորդ կողմի պատասխանատվության» հարցին անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Սեծ պալատը 2015թ. հունիսի 16-ի Դելֆին ընդդեմ Էստոնիայի² գործով վճռով, որով սահմանեց, որ երրորդ անձի հեղինակած վիրավորական, զրպարտող կամ այլ բնույթի անօրինական խոսքի համար լրատվամիջոցը կարող է կրել պատասխանատ-

1. <http://blognews.am/arm/news/303247/paster-unen-mardik-or-sayat-novan-adrbejanci-e-vahram-petrosyan-tesanyut.html>

2. [http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-155105#{"itemid":\["001-155105"\]}](http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-155105#{)

վություն: Ընդ որում, դատարանը խախտումը սահմանեց այն հիմքով, որ լրատվամիջոցը, իրագեկված լինելով իր հարթակում այլ անձանց հեղինակած առերևույթ վիրավորական արտահայտությունների առկայության մասին, միջոցներ չէր ձեռնարկել դրանք հեռացնելու համար, այլ փոխարենը ձևականորեն սպասել էր մեկնաբանությունները հեռացնելու մասին տուժող կողմի գրավոր ծանուցմանը, որը ստանալուն պես անմիջապես հեռացրել էր վիրավորական մեկնաբանությունները իր էջից:

Եվրոպական դատարանի վճռի հիման վրա Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը 2015թ.-ի հուլիսի 23-ին հրապարակեց Ուղեցույց³, որում նշեց, որ «խմբագրություններն այլ հեղինակների մեկնաբանությունների համար պատասխանատվությունից ազատվում են միայն այն դեպքում, եթե կարող են հիմնավորել, որ տեղյակ չեն եղել և օբյեկտիվորեն չէին կարող տեղյակ լինել նման գրառումների առկայության մասին»:

Այսինքն, զուտ այն հանգամանքը, որ լրատվամիջոցի հարթակում հրապարակված խոսքի հեղինակը այլ անձ է, չի կարող ինքնին պատասխանատվությունից խուսափելու հիմք հանդիսանալ: Առավել կարևոր է, թե արդյոք լրատվամիջոցը տեղյակ էր իր էջերում նման խոսքի առկայության մասին և թե արդյոք ձեռնարկել է անհրաժեշտ ու բավարար միջոցներ դրանք հեռացնելու համար: Այսինքն՝ նախապատվությունը տրվում է լրագրողական բարեխղճությանը:

Վերը նշվածով հանդերձ, **Խորհուրդը ձեռնպահ է մնում** սույն գործի փաստերը գնահատելուց՝ հաշվի առնելով, որ դատական գործընթացը դեռ ընթացքի մեջ է:

3. http://ypc.am/wp-content/uploads/2015/09/Guidelines_Delfi-AS-v.-Estonia-ECHR-Judgment_arm.pdf

Կ Ա Ր Ծ Ի Ը 48

**Լրագրողին որպես վկա
ոստիկանություն հրավիրելու
պրակտիկայի վերաբերյալ**

Հրապարակված է 2015թ.-ի դեկտեմբերի 7-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2015 թվականի հունիսի 10-ին ՀՀ գլխավոր դատախազությունը տարածեց հաղորդագրություն¹ այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարարի դիմումի հիման վրա ստուգվել է «Հայկական ժամ» ինտերնետային լրատվական կայքում նախարարի կնոջ՝ Ռուզաննա Խաչատրյանի կողմից ենթադրաբար մահվան ելքով վրաերթ կատարելած լինելու մասին լրատվության փաստական հիմքերը ու պարզել, որ դրանք չեն համապատասխանում իրականությանը: Ըստ հաղորդագրության, հաստատվել է, որ Հովհաննես Հայրապետյանի՝ մահվան ելքով 12.06.2002թ Երևան-Աշտարակ ավտոճանապարհին տեղի ունեցած վթարի դեպքի առթիվ հարուցված քրեական գործով Կոտայքի մարզի առաջին աստիճանի դատարանի 25.04.2003թ. դատավճռով այլ անձ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 4 տարի ժամկետով: Հաշվի առնելով վերը նշվածը, մասնավորապես, որ լրատվության փաստական հիմքերը չեն համապատասխանում իրականությունը, Գլխավոր դատախազությունը որոշել է նյութերն ուղարկել ՀՀ Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն՝ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան ընթացքը լուծելու համար:

2015 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ գլխավոր դատախազությունը մեկ այլ հաղորդագրությամբ տեղեկացրել է, որ ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությունում 2015 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով (սուտ մատնությունը) հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Տեղեկատվական վեճերի խորհուրդը մտահոգված է, որ վերը նշված գործի քննությունը կարող է միջամտել լրատվամիջոցի տեղեկատվություն տարածելու ազատության իրավունքին՝ հատկապես նման հնարավորությունը դիտելով ՀՀ վճռաբեկ դատարանի 05/06/2015թ. թիվ ԼԴ/0051/01/14 քրեական գործով Քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի նոր մեկնաբանության լույսի ներքո, համաձայն որի՝ սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին նախորոք զգուշացված լինելը այլևս այդ հանցակազմի օբյեկտիվ հատկանիշ չէ²:

Նման մեկնաբանությունը տեսականորեն հնարավորություն է տալիս լրագրողին ենթարկել քրեական պատասխանատվության հոդվածում արտահայտած կարծիքի կամ փաստացի արտահայտության համար, եթե դա վերա-

1. <http://prosecutor.am/am/news/6285/>

2. ՀՀ վճռաբեկ դատարանի Հեղինե Գալստյանի գործով հունիսի 5, 2015թ. որոշում, կետ 24:

բերում է անձի կազմից հանցագործության կատարմանը, եթե նման հայտարարության ճշմարտացիությունը հետազայում չի հաստատվել և եթե նման հայտարարություն կատարելիս լրագրողը որոշել է չբացահայտել իր աղբյուրը: Որևէ կերպ չնվազեցնելով մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հանցավոր ոտձգություններից պաշտպանելու պետական իրավասու մարմինների կարևոր դերակատարումը, **Խորհուրդը միևնույն ժամանակ գտնում է**, որ սուտ մատնության հիմքով քրեական գործի քննությունը պետք է կատարվի՝ շրջանցելով լրագրողին: Նման դիրքորոշումն առավել առարկայական է դառնում ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից լրագրողական աղբյուրների գաղտնիության առնչությամբ արտահայտած դիրքորոշման լույսի ներքո, համաձայն որի՝

«ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող իրավունքները, մասնավորապես՝ խոսքի ազատությունը և լրատվության միջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը (հոդվ. 27), չեն կարող ապահովվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում, որովհետև պաշտպանության ենթակա օբյեկտները տարբեր են»³:

Խորհուրդը հույս է հայտնում, որ քննչական մարմինները հետամուտ կլինեն Սահմանադրական դատարանի վերը արտահայտած դիրքորոշմանը և քրեական գործով քննություն կատարելիս լրագրողին չեն ներկայացնի աղբյուրը բացահայտելու վերաբերյալ պահանջ:

3. ՍԴՈ-1234, կետ 8, պարբ. 5:

Կ Ա Ր Ծ Ի Ք 49

«Թռչող առագաստ» ՍՊԸ-ն ընդդեմ
«Մելտեքս» ՍՊԸ-ի դատական
գործի կապակցությամբ

Հրապարակված է 2015թ.-ի դեկտեմբերի 22-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2015թ.-ի հոկտեմբերի 15-ին «Թռչող Առազաստ» ՍՊԸ անվանումով ընկերությունը դատական հայց է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Մելտեքս» ՍՊԸ-ի (Ա1+ լրատվամիջոցի հիմնադիր)՝ գործարար համբավի պաշտպանության պահանջով: Ընկերությունը լրատվամիջոցից պահանջում է հերքել զրպարտություն համարվող տեղեկությունները, ինչպես նաև փոխհատուցել 1 մլն դրամ: Հայցվոր ընկերությունը միաժամանակ միջնորդել է արգելանք դնել պատասխանողի գույքի, դրամական միջոցների վրա, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը:

Դատարան դիմելու պատճառ է եղել Ա1+ լրատվամիջոցի կողմից 15 տարի առաջ տեղի ունեցած դեպքերի մասին պատմող լրատվական նյութի վերահրապարակումը «Օրացույց» խորագրով հաղորդաշարի շրջանակներում: Այս հաղորդաշարի ներքո լրատվամիջոցը ամեն օր ներկայացնում է իր արխիվային լրատվական նյութերը՝ նպատակ ունենալով ցույց տալ, թե տվյալ օրը նախորդ տարիներին ինչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել: Վիճահարույց նյութը կայքում տեղադրվել է 2015թ.-ի սեպտեմբերի 24-ին, որում նշվել է, որ 2000 թվականի սեպտեմբերի 24-ին Իսահակյան 41 հասցեում գտնվող «Առազաստ» սրճարանում կատարվել է սպանություն: Լրատվությունը Պողոս Պողոսյանի հայտնի գործով իրադարձության մասին է: Հայցվոր կազմակերպությունը իր հայցում նշել է, որ դեպքը տեղի է ունեցել «Առազաստ» սրճարանին կից «Պոպլավոկ» սրճարանում, որը պատկանում է «Կարմիր առազաստներ» ՍՊԸ-ին, որը բոլորով այլ ընկերություն է, և այդ իմաստով լրատվանյութը լրջորեն վնասել է իր գործարար համբավը:

Դատական առաջին նիստը նշանակվել է 2016թ. փետրվարի 2-ին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Արխիվային նյութերի վերահրապարակումը և այդ հիմքով զրպարտության, վիրավորանքի կամ գործարար համբավի համար քաղաքացիական պատասխանատվության հարցը նոր երևույթ է ներպետական պրակտիկայում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արխիվային նյութերը համարում է կրթական և պատմական հետազոտությունների համար կարևոր աղբյուր՝ հատկապես հաշվի առնելով առջանց տիրույթում դրանց հեշտությամբ և ամբողջական եղանակով հասանելիությունը: Առջանց արխիվները նաև կարևոր աղբյուր են հանրության համար կարևոր նորությունները և տեղեկությունները պահպանելու առումով: Այդուհանդերձ, ներկա իրադարձությունների մասին տեղեկատվության համեմատ արխիվային նորությունները երկրորդական դեր ունեն, քանի որ մամուլի առաջնային դերը ներկա իրադարձությունների նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթն է՝ հանրային «հսկող շան» դերը: Այս առումով նորությունների արխիվային նյութերը որպես լրատվական նյութ թեև օգտվում են ազատ խոսքի պաշտպանության համակարգերից, սակայն ոչ այն խորությամբ, ինչ ընթացիկ դեպքերի մասին տեղեկատվությունը: Լրատվանյութը որպես «փչացող ապ-

րանք» սկզբունքի համաձայն, լրատվանյութի տարածման կարևոր պայմաններից է դրա արագ տարածումը, քանի որ հապաղումը կարող է կորցնել լրատվանյութի ակտուալությունը, և եթե այս համատեքստում լրագրողը թույլ է տալիս փաստի սխալ, նույնիսկ այդ դեպքում կարող է շարունակել օգտվել ազատ խոսքի պաշտպանությունից, եթե հիմնավորում է, որ ընդհանուր առմամբ գործել է բարեխղճորեն, լրագրողական վարքագծի նորմերի համաձայն:

Այլ է իրավիճակը, երբ խոսքը վերաբերում է արխիվային նյութերի վերահրապարակմանը: Արխիվային նյութի վերահրապարակման ժամանակ բացակայում է արագության գործոնը՝ լրատվական նյութը արագորեն հանրությանը հաղորդելու կարևորությունը և հրատապությունը: Սույն հանգամանքը ստիպում է, որպեսզի լրատվամիջոցները ցուցաբերեն առավել զգոնություն արխիվային նյութեր վերահրապարակելիս:

Արխիվային նյութերի վերահրապարակումը բարձրացնում է նաև վաղեմության ժամկետի մասին հարց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդունում է *Internet publication rule կանոնը*¹, համաձայն որի առցանց ոլորտում յուրաքանչյուր վերահրապարակում դա նորովի հրապարակում է, այսինքն վաղեմության ժամկետը, այդ թվում նաև պաշտպանական բոլոր համակարգերը, վերսկսվում են և շարունակում են գործել յուրաքանչյուր նոր հրապարակումով: Խնդիրը կայանում է նրանում, որ համացանցը հնարավորություն է տալիս դա կատարել հեշտությամբ, առանց նկատելի ջանքերի ու շարունակաբար, որը շոշափելի ռիսկեր է ստեղծում լրատվամիջոցների համար արխիվային նյութերը վերահրապարակելիս: Վերը նշվածով հանդերձ Եվրոպական դատարանը նաև նշել է, որ տևական ժամանակ անց հրապարակված արխիվային նյութի համար պատասխանատվության ենթարկելը, խիստ առանձնահատուկ հանգամանքների բացակայության դեպքում, կարող է լրատվամիջոցի տեղեկություններ տարածելու իրավունքի անհամաչափ միջամտություն հանդիսանել:

Ուստի, **խորհուրդը գտնում է**, որ նույնիսկ խախտում արձանագրելու դեպքում ցանկալի է, որ դատարանը սույն գործով խիստ համաչափ, նվազագույն պատասխանատվության միջոցներ սահմանի: Նման մոտեցումը արդարացված կլինի նաև այն հիմքով, որ տարածվել է մի տեղեկություն, որի բովանդակությունը վաղուց հանրությանը հայտնի է եղել, որևէ նոր տեղեկություն չի ավելացվել և որևէ կերպ նշված տեղեկությունը իր արխիվային տարբերակից չի խմբագրվել հրապարակողի կողմից: Այս համատեքստում խիստ անհրաժեշտ է պարզելը, թե արդյոք կազմակերպությունը կրել է էական նյութական կամ ոչ նյութական վնաս հանրությանը հայտնի տեղեկության վերահրապարակման արդյունքում:

Խորհուրդը գտնում է, որ նույնիսկ խախտում արձանագրելու դեպքում հայցվորի համար բարենպաստ դատական ակտը կարող է ինքնին արդարացի և բավարար փոխհատուցման միջոց հանդիսանալ՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով:

1. Times Newspapers Ltd. (1 & 2), ընդդեմ Միացյալ Թագավորությանը, թիվ 3002/03 և 23676/03, § 39:

Կ Ա Ր Ծ Ի Բ 50

**Մարդու իրավունքների եվրոպական
դատարանի Magyar
Tartalomszolnítatgk Egyesülete and
Index.hu Zrt-ն ընդդեմ Հունգարիայի
գործով վճռի կապակցությամբ**

Հրապարակված է 2016թ.-ի փետրվարի 2-ին

2016թ. փետրվարի 2-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերը նշված գործով կայացրել է վճիռ, որում արտահայտել է կարևոր իրավական դիրքորոշում առցանց լրատվամիջոցի հարթակում երրորդ անձանց մեկնաբանությունների իրավական կարգավորման մասին: Սույն վճիռը նախկինում ՄԻԵԴ-ի կողմից կայացված Դելֆին ընդդեմ Էստոնիայի գործով վճռի տրամաբանական շարունակությունն է, որում, սակայն, եվրոպական դատարանը ցուցաբերել է այլ դիրքորոշում: Հաշվի առնելով արտահայտված իրավական դիրքորոշման կարևորությունը առցանց լրատվամիջոցների գործունեության ոլորտում, Խորհուրդը անհրաժեշտ համարեց արտահայտել դիրքորոշում վճռում բարձրացված հարցերի վերաբերյալ:

ՎՃՌԻ ՀԱՍՏՈՒՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն գործով դիմումատուները երկու ընկերություններ են. Magyar Tartalomszolgálatk Egyesülete ընկերությունը (*այսուհետ՝ MTE*), և Index.hu Zrt ընկերությունը (*այսուհետ՝ Index*): Առաջինը Հունգարիայի ինտերնետ պրովայդեր ընկերությունների ոչ առևտրային, ինքնակարգավորվող մարմին է, որը հետևում է պրովայդեր ընկերությունների կողմից մասնագիտական վարքագծի նորմերի կիրառմանը, որի կազմում գործում է նաև վեճերի լուծման արբիտրաժ մարմին, որի որոշումները պարտադիր են իր տասնմեկ անդամների համար: Երկրորդը շահույթ հետապնդող լրատվական մարմին է և Հունգարիայի ամենամեծ առցանց լրատվամիջոցներից մեկն է:

2010թ. փետրվարի 5-ին MTE ընկերությունը հրապարակել է մի կարծիք գովազդային մի ընկերության կողմից անբարեխիղճ գովազդի մասին, որի պատճառով բազմաթիվ քաղաքացիների կրել են ֆինանսական կորուստներ: Այս կարծիքը մի որոշ ժամանակ հետո վերահրապարակել է իր հարթակում Index ընկերությունը: Հոդվածների հրապարակումից հետո բազմաթիվ ընթերցողներ հոդվածների ներքո թողել են վիրավորական և նույնիսկ վուլգար բնույթի մեկնաբանություններ գովազդատու ընկերության հասցեին: Գովազդատու ընկերությունը դատական հայց է ներկայացրել ընդդեմ երկու ընկերությունների՝ պնդելով, որ հոդվածները և դրանց ներքո երրորդ անձանց մեկնաբանությունները վնասել են ընկերության համբավը: Դատական հայցերի մասին տեղեկացվելուն պես դիմումատու ընկերությունները հեռացրել են վիճահարույց մեկնաբանությունները: Այդուհանդերձ, Հունգարիայի դատարանները, այդ թվում նաև Հունգարիայի սահմանադրական դատարանը, բավարարել է հայցապահանջները՝ սահմանելով, որ վիճահարույց մեկնաբանությունները վիրավորական էին, վնասել են ընկերության համբավը և որպես այդպիսին անցել են թույլատրելի քննադատության շրջանակները: Արդյունքում, դատարանները պարտավորեցրել են յուրաքանչ-յուր ընկերությանը վճարել մոտ 250 եվրոյի չափով գումար՝ հայցվորների դատական ծախսերի դիմաց:

Դիմումատու ընկերությունները դիմել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա ներկայացրել են, որ Հունգարիայի դատարանների որոշումների արդյունքում իրենք ստիպված են իրենց բոլոր ընթերցողների մեկնաբանությունների մոդերաց-

նել, որը որպես այդպիսին հակասում է համացանցում ազատ արտահայտվելու իրավունքի էությանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտավ, որ դիմումատու ընկերություններին երրորդ անձանց մեկնաբանությունների համար պատասխանատվության ենթարկելը համացանցում ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ սահմանափակում է և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Սույն գործով Եվրոպական դատարանի վճիռը էապես տարբերվում է Դելֆին ընդդեմ Էստոնիայի գործով վճիռից, թեև երկու դատական ակտերի հիմքում ընկած իրավունքի մասին հարցը նույնանման էր: Երկու դեպքում էլ խնդրո առարկա հարցը կայանում է նրանում, թե արդյոք հրապարակողը (լրատվամիջոց, բլոգեր, առցանց ինտերակտիվ ծառայություններ մատուցող ընկերություն, և այլն) կրում է պատասխանատվություն իր հարթակից անձի հնչեցրած արտահայտությունների համար: Դելֆի-ի գործում եվրոպական դատարանը արձանագրեց, որ ընկերությունը խախտել էր կազմակերպության գործարար համբավը, քանի որ թույլ էր տվել իր հարթակում ծավալվել ամերիկյան անօրինական, ատելություն սերմանող և բռնության կոչ անող խոսք՝ ատելության խոսք:

Այս լույսի ներքո, դատարանի համար երկրորդ վճռորոշ փաստական հանգամանքը այն էր, որ ընկերությունը ոչինչ չէր ձեռնարկել նման խոսքը իր կայքից հեռացնելու համար՝ այդպիսով դրսևորելով անբարեխիղճ մոտեցում այլոց իրավունքները հարգելու իր պարտականության հանդեպ: Դելֆի-ի գործով եվրոպական դատարանի վճիռը քննադատաբար ընդունվեց լրագրողների համայնքի և ազատ խոսքի պաշտպանների կողմից, որոնք գտնում էին, որ վճիռը էապես սահմանափակում էր ազատ արտահայտվելու իրավունքի շրջանակները համացանցում՝ անհամաչափ ծանր բեռ սահմանելով համացանցում ինտերակտիվ ծառայություններ մատուցող ընկերությունների, լրատվամիջոցների համար երրորդ կողմի մեկնաբանությունները, հրապարակումները մոդերացնելու հարցում:

Նրանք գտնում էին, որ ինտերնետի տեխնոլոգիաների ժամանակակից զարգացումների պարագայում մոդերացումը չի կարող շոշափելի արդյունքներ տալ անիրավաչափ խոսքը համացանցում հայտնաբերելու և հեռացնելու ուղղությամբ՝ դրանով լրատվամիջոցներին կանգնեցնելով շարունակաբար պատասխանատվության ենթարկվելու անխուսափելի վտանգի առջև, որի հանգամանքը համընդհանուր սառեցնող ազդեցություն է թողնում համացանցում ազատ արտահայտվելու իրավունքի վրա: Իր հերթին, եվրոպական դատարանը իր մոտեցումը պատճառաբանեց այն հանգամանքով, որ համացանցը դժվար կառավարվող տիրույթ է և նույնիսկ մեկ անգամ հրապարակայնորեն ասված անօրինական խոսքը ընդմիջտ մնում է այդ տիրույթում? Թուժող կողմի համար ստեղծելով գրեթե անհաղթահարելի խոչընդոտներ անիրավաչափ խոսք այդ տիրույթում հայտնաբերելու, հեռացնելու և այդպիսով իր խախտված իրավունքը վերականգնելու համար:

Ուսումնասիրելով եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները սույն դատական ակտում, **Խորհուրդը գտնում է**, որ հետևյալ հանգամանքները վճռորոշ դեր են խաղացել եվրոպական դատարանի որոշման համար, որոնք կարող են ուղեցույց հանդիսանալ արցանց ոլորտում իներակտիվ լրատվամիջոցների համար՝ իր գործունեության արդյունքում պատասխանատվությունից խուսափելու համար.

- **Վիճահարույց արտահայտությունների բնույթը.** վճռորոշ նշանակություն ունեւր այն հանգամանքը, որ տվյալ դեպքում վիճահարույց արտահայտությունները թեև իրենց բնույթով վուլգար էին և անծի/ընկերության արժանապատվությունը կամ համբավը արատավորող, սակայն դրանք ատելություն սերմանող, ատելություն և բռնություն հրահրող ու անծի ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող խոսք չէր: Ի համեմատություն դրա, Դելֆի-ի գործում վիճահարույց արտահայտությունները ատելության խոսք էին:
- **Մեկնաբանությունների դաշտում հաղորդակցման եղանակը.** ինչ վերաբերում է արտահայտությունների վուլգար բնույթին, եվրոպական դատարանը նկատեց, որ թեև մեկնաբանությունները ցածրամակարդակ խոսքիւ տեսակ էր, սակայն դա հաղորդակցվելու ընդհանուր եղանակ է ինտերնետ հարթակի մեկնաբանությունների դաշտում: Իր հերթին, մեկնաբանությունների հաճախականությունը ինտերնետ հարթակում իր հերթին նվազեցնում է այն բացասական հետևանքը, որը կարելի է վերագրել նման արտահայտություններին:
- **Հանրային հետաքրքրություն ներկայացնող խոսք.** տվյալ դեպքում վիճահարույց հոդվածը և դրանց ներքո երրորդ անձանց մեկնաբանությունները շոշափում էին հանրային, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքեր՝ հանրային ծառայություններ մատուցող անբարեխիղճ գովազդատուներին, որոնց գործունեությունից վնաս էին կրել շատ քաղաքացիներ:
- **Դիմումատուների կարգավիճակը.** դատարանի համար հատկանշական էր, որ դիմումատուները իրավաբանական, այլ ոչ թե ֆիզիկական անձինք էին: Այս առումով հատկանշական է դատարանի սահմանումը առ այն, որ անհրաժեշտ է տարբերակում անցկացնել մի կողմից իրավաբանական անձի առևտրային, գործարար հեղինակության և մյուս կողմից ֆիզիկական անձի հեղինակության միջև: Եթե անձի հեղինակության անվանարկումը կարող է վնասել նրա անձնական արժանապատվությունը, կազմակերպության համբավի վնասը հիմնականում ունի գործարար, առևտրային հետևանքներ և որպես այդպիսին չունի այն բարոյական հետևանքները, որ կրում են անձինք իրենց անձնական արժանապատվության ոտնահարման դեպքում:
- **Կազմակարպության գործունեության բնույթը.** Դատարանի համար էական էր նաև այն հանգամանքը, որ դիմումատու ընկերություններից մեկը շահույթ հետապնդող կազմակերպությունչ չէր և նրա գործունեությունը սահմանափակված էր ինտերնետ ծառայություններ մատուցող ընկերությունների համար էթիկական կանոնների մշակումով և դրանց կիրառութամբ, և դա անում էր ինքնակարգավորման կազմակերպաիրավական

եղանակով: Ինչ վերաբերում է երկրորդ դիմումատու ընկերությանը, ապա թեև այդ ընկերությունը իրականացնում էր առևտրային գործունեություն, դա առցանց լրատվական գործակալություն էր, որը հանրությանը իրազեկում էր հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի մասին: Այդ իմաստով դատարանը որոշեց, որ երկու ընկերությունների գործողությունները պետք է գնահատել այն սկզբունքների ներքո, որոնք կիրառելի են մամուլի նկատմամբ:

- **Ծանուցել և հանել ընթացակարգը.** Դելֆի-ի գործով եվրոպական դատարանը փոքր ինչ թերագնահատեց «ծանուցել և հանել» ընթացակարգի նշանակությունը և երկրորդ պլան մղեց դրա գործածությունը լրատվամիջոցների համար որպես պաշտպանության միջոց, որը մինչ այդ առցանց լրատվամիջոցների համար համարվում էր պաշտպանության արդյունավետ գործիք: Սույն գործով դատարանը նորովի գնահատեց այս ընթացակարգի նշանակությունը և ըստ էության սահմանեց, որ առցանց ինտերակտիվ ծառայություններ մատուցող առևտրային ընկերությունների համար «ծանուցել և հանել» ընթացակարգը կարող է գործարար համբավի պաշտպանության արդյունավետ միջոց հանդիսանալ և հակառակը կարելի է պնդել միայն այն դեպքում, երբ կոնտենտը ներառում է ատելության խոսք՝ ինչպես Դելֆի-ի գործով:
- **Ղատական ակտի հետևանքը.** Եվրոպական դատարանը նորովի գնահատեց ոչ բարենպաստ ղատական ակտի հետևանքը լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի վրա: Եթե Դելֆի-ի գործով դատարանի համար էական էր այն հանգամանքը, որ ոչ բարենպաստ ղատական ակտի դեպքում պարտվող լրատվամիջոցի համար սահմանվել էր նվազագույն գույքային պատասխանատվություն (ոչ մեծ գումարային փոխհատուցում վճարելու պարտականություն), ապա սույն գործով եվրոպական դատարանը դա սահմանեց, որ ոչ բարենպաստ ղատական ակտի բացասական հետևանքը գնահատելիս էական է ոչ թե գույքային պատասխանատվության նվազագույն չափը կամ այդպիսի պատասխանատվության բացակայությունը, այլ ոչ բարենպաստ ղատական ակտի առկայությունը ինքնին, քանի որ հենց այդ հանգամանքը ինքնին, ուղղակիորեն կամ անուղղակի կերպով կարող է սառեցնող ազդեցություն ունենալ ինտերնետ հարթակի ազատ արտահայտվելու իրավունքի վրա՝ հատկապես այն հարթակների, որոնց գործունեությունը առևտրային նպատակ չի հետապնդում:

Կ Ա Ր Ծ Ի Ք 51

**Ռուզաննա Խաչատրյանն ընդդեմ
«Հրապարակ» օրաթերթի դատական
վճռի կապակցությամբ**

Հրապարակված է 2016թ.-ի մարտի 13-ին

2015 թվականի հունիսի 30-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը իր թիվ 42 որոշմամբ կարծիք արտահայտեց վերը նշված դատական գործի առնչությամբ: Հաշվի առնելով, որ դատական գործը դեռ գտնվում էր նախնական փուլում, խորհուրդը չանդրադարձավ վեճի էությանը, այլ բավարարվեց միայն արտահայտելով կարծիք հանրային պաշտոնյայի ընտանիքի անդամների անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվության, լրագրողական ազատության իրավունքների շրջանակների մասին՝ առանց անդադարնալու գործի փաստերին:

2015թ. դեկտեմբերի 7-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրեց վճիռ թիվ ԵԿԴ/2380/02/15 քաղաքացիական գործով, որով մասնակիորեն բավարարեց հայցվորի պահանջները: Վճռով դատարանը ոչ միայն պարտավորեցրեց լրատվամիջոցին տպագրել հերքում, այլ նաև www.hraparak.am կայքից հեռացնել «Հանրությունն ուզում է իմանալ» վերնագրով հոդվածը:

Փաստորեն, որպես իրավական պաշտպանության միջոց դատարանը առաջին անգամ սահմանեց լրատվական նյութը համացանցից հեռացնելու մասին որոշում: Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի հիման վրա, որը որպես իրավական պաշտպանության միջոց սահմանում է նաև, ի թիվս այլի, մինչև խախտումը եղած դրության վերականգնումը: Մինչ այս որոշումը դատարանները կոնտենտը հեռացնելու կամ լրատվական նյութը համացանցում տպագրելուց ձեռնպահ մնալու մասին որոշում կայացրելի էին հայցի ապահովման միջոցի հիմքով: Փաստորեն, պետք է արձանագրել, որ լրատվական նյութը համացանցից հեռացնելը այսուհետ կիրառվում է որպես իրավական պաշտպանության միջոց դատարանների կողմից՝ վիրավորանքի և զրպարտության մասին գործերով:

Խորհուրդը հիշեցնում է, որ հանրությանը հայտնի «Ֆեյքերի մասին օրենքի» նախագծով նույնպես առաջարկվում էր օրենքով սահմանել մի ամբողջ իրավական կառուցակարգ կոնտենտը համացանցից հեռացնելու մասին: Փաստորեն, դատական որոշումով լուծվեց այն խնդիրը, որն իրենց առջև նպատակ էին դրել օրենքի նախագծի հեղինակները:

Թեև լրատվական կոնտենտի հեռացումը ինքնին արտահայտվելու ազատության և լրագրողական ազատության միջամտություն է, **Խորհուրդը գտնում է**, որ առավել նպատակահարմար է, որ նման միջամտությունը կատարվի կոնկրետ գործի շրջանակներում կայացված դատական որոշմամբ, քան օրենսդրական ընդհանուր կարգավորմամբ, որը, հնարավորություն տալով շրջանցել դատական պաշտպանության ընթացակարգերը, առավել դյուրին է դարձնում առցանց միջավայրում լրագրողական ազատության միջամտության հնարավորությունը՝ այդպիսով վտանգելով արտահայտվելու ազատությունը առցանց միջավայրում:

Կ Ա Ր Ծ Ի Զ 52

Բավական խաչատրյանն ընդդեմ
Սարգիս Հացպանյանի, Առավոտ
օրաթերթ ՍՊԸ-ի, Նյուս ԱՄ
լրատվական-վերլուծական
գործակալության և «Նոյան Տապան»
լրատվական կենտրոնի դատական
գործի կապակցությամբ

Հրապարակված է 2016թ.-ի ապրիլի 8-ին

ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2016 թվականի փետրվարի 16-ին ժամը 12.00-ին «Նոյան Տապան» լրատվական գործակալության մամուլի սրահում տեղի է ունեցել տարածաշրջանային հարցերով փորձագետ–վերլուծաբան Սարգիս Հացպանյանի ասուլիսը¹: Ասուլիսը նվիրված էր Ստամբուլի հայ համայնքին, սույն թվի փետրվար ամսին ՀՀ քաղաքացիների կողմից կատարված աղմկահարույց մի շարք հանցագործությունների հետ կապված զարգացումներին և դրանց բացասական ազդեցությանը հայ համայնքի վրա:

Ասուլիսի ընթացքում Սարգիս Հացպանյանը ցույց է տվել մի կնոջ լուսանկար և, նշելով նրա անուն ազգանունը, հայտարարել է, որ այդ կինը հայկական համայնքում հայտնի է որպես «մամ Ոռզա» և նա Հայաստանի տարբեր մարզերից հավաքագրում է կանանց ու տանում Թուրքիա թրաֆիքինգի նպատակով, և որ նա ունի չորս անձնագիր: Սարգիս Հացպանյանը նաև հայտարարել է, որ լուսանկարում պատկերված կինը հետախուզվում է Հայաստանի Հանրապետության կողմից: Ասուլիսին ներկա են եղել մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչներ՝ այդ թվում նաև www.aravot.am առցանց լրատվամիջոցի լրագրողը: Ասուլիսը հեռարձակվել է ուղիղ եթերով՝ ասուլիսի կազմակերպիչ «Նոյան Տապան» լրատվական կենտրոնի կողմից:

Սույն թվականի մարտի 9-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դատական հայց է ներկայացվել ֆիզիկական անձի կողմից ընդդեմ Սարգիս Հացպանյանի, «Առավոտ» լրատվամիջոցի, www.news.am լրատվական գործակալության և «Նոյան Տապան» լրատվական կենտրոնի դեմ՝ վիրավորանքի և զրպարտության հիմքով: Հայցվորը պնդում է, որ Սարգիս Հացպանյանը մամուլի ասուլիսի ընթացքում վիրավորել է իր արժանապատվությունը և զրպարտել հանցագործության կատարման մեջ՝ միաժամանակ ցուցադրելով իր լուսանկարը: Ի հավելումն, հայցվորը նշել է, որ պատասխանող լրատվամիջոցները նույնպես վիրավորել ու զրպարտել են իրեն ասուլիսի հիման վրա հրապարակված լրատվանյութերում: Հայցվորը նույնանման հիմքով որպես պատասխանող է հրավիրել նաև «Նոյան Տապան» լրատվական գործակալությանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Խորհուրդը գտնում է, որ մամուլ ասուլիսի բանախոսի հրապարակած տեղեկատվության տարածման համար լրատվամիջոցները չեն կարող պատասխանատվության ենթարկվել, քանի որանք պաշտպանված են Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասով, որը սահմանում է հետևյալը.

«Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվությանն են պատկանում»

1. <http://www.nt.am/am/news/217181/>

կատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին)»:

Փաստորեն, 6-րդ մասը սահմանում է հրապարակային արտահայտության բարեխիղճ վերարտադրողե հասկացությունը, որը տարածվում է նաև մամուլի ասուլիսը լուսաբանած լրատվամիջոցների վրա, եթե լուսաբանելը կատարվել է «բարեխղճորեն» և լրագրողական էթիկայի ու օրենքի պահանջների պահպանմամբ՝ աղբյուրի վկայակոչումը կատարվել է օրենքով սահմանված կարգով և վերարտադրելիս չի աղավաղվել տեղեկատվության բովանդակությունը:

Վերը նշվածից բխում է, որ 6-րդ կետով սահմանված պայմանի բացակայության դեպքում պատասխանատվության ենթակա սուբյեկտը բոլոր դեպքերում հրապարակային հայտարարության աղբյուրն է՝ հեղինակը: Ըստ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի², «հեղինակը» ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են:

Տվյալ դեպքում վիճահարույց հրապարակային արտահայտության հեղինակը Սարգիս Հացպանյանն է, քանի որ նա է ընչեցրել վիճահարույց արտահայտությունները հրապարակային եղանակով, մինչդեռ լրատվամիջոցները զուտ վերարտադրել են հեղինակի հրապարակային խոսքը՝ հանրությանը տրամադրելով տեղեկատվություն: Ինչ վերաբերում է մամուլի ասուլիսի կազմակերպչին՝ «Նոյան Տապան» լրատվական կենտրոնին, ապա կազմակերպության դերակատարումը սահմանափակվել է միայն հեղինակին լրատվական հարթակ տրամադրելով, որի պարագայում լրատվական կենտրոնը նույնպես չի կարող պատասխանատվություն կրել հեղինակի հրապարակային արտահայտության համար:

2. Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 14-15:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյրոյան (խորհրդի քարտուղար)
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
(մինչև 2015թ.-ի հոկտեմբերի 9-ը)

Արա Ղազարյան
«Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

Մանանա Ասլամազյան
«Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

Բորիս Նավասարդյան
Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան
«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

idc@gmail.com

<http://www.idcarmenia.am>



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Սալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ` info@asoghik.am